

338.14
3m-25

1935

77 FEB 2010


338.14

338-25

Պրակտիկական լուսանկարչության, միացե՛ք

ՅԱ. Ա. ՅԱԿՈՎԼԵՎ

330.331



ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԿՈՆՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՅԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Համ. Կ(բ) Կենտրոնի գյուղատնտեսական բաժնի
վարչի գեկուցումը Մոսկվայի և Լենինգրադի կու-
սակցական ակտիվի նիստերում

ՀԱՎԵԼՎԱԾ

Գյուղատնտեսական Արտիկ
Որինակի կանոնադրությունը

09.07.2013

30720



42805-63



I. ԱՃԵԼ ԵՆ ՆՈՐ ԿՈԼՏԵՏԵՍԱՅԻՆ ԳՅՈՒՂԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐ
ՈՒ ՂԵԿԱՎԱՐՈՒՅԻՆԵՐ

Հարվածային կոլտնտեսականների յերկրորդ համադրումարը ցույց տվեց, թե խոշոր տնտեսության ինչպիսի զարմանալի կազմակերպիչներ առաջ բերին կոլտնտեսություններն ամենակարճ ժամանակամիջոցում:

Հարվածային կոլտնտեսականների յերկրորդ համադրումարում համարյա ամեն մի պատգամավոր պատմում էր իր տնտեսության հաղթանակների մասին, հպարտանում էր իր կոլտնտեսության մեջ ստացված բերքով ու կիթով: Համադրումարի պատգամավորները վորպես անցյալի մասին պատմում էին անհատական գյուղատնտեսությունը կոլտնտեսային ուղիների վրա փոխադրելու առաջին յերկու-յերեք տարվա դժվարությունների մասին:

Համադրումարում կար 1433 այդպիսի մարդ: Դրանցից 390 հոգի կոլտնտեսային բրիգադիր, 331 հոգի կոլտնտեսության նախագահ, 55 տրակտորիստ, կոմբայնավար ու մեխանիկ, 161 հոգի անասնապահական ֆերմաների աշխատող: Համադրումարի մասնակիցների յերկու յերրորդ մասը միայն վերջին չորս տարում դարձել են կոլտնտեսական: Համադրումարի բոլոր պատգամավորների յերկու յերրորդ մասն անկուսակցական կոլտնտեսականներ էին: Դրանք բոլորն էլ այն մարդիկն են, փորոնց կոլտնտեսային կարգերը տվել է ամեն ինչ՝ յեւք դեպի ունեվոր ու կուլտուրական կյանքը, խոշոր արտադրության մեջ աշխատելու և նրան ղեկավարելու հնարավորությունը:

Կոլտնտեսային գյուղի այդ նոր, իսկական խոր-
հրդային կազմերի մեջ աչքի ընկնող տեղ գրավեցին
կանայք: Նրանք համագումարում կազմում էին 442
հոգի՝ ամբողջ համագումարի մեկ-յերրորդ մասը: Նը-
րանցից 102 հոգի բրիգադիր և 27 հոգի կոլտնտեսու-
թյունների նախագահ էին: Հարվածային կոլտնտեսա-
կանների առաջին համագումարում՝ յերկու տարի ա-
ռաջ, կանայք կազմում էին համագումարի միայն մեկ
յոթերորդական մասը:

Այդ մարդկանցից ամեն մեկը կենդանի ուրինակ էր
հանդիսանում այն մեծագույն հեղաշրջման, վորը տե-
ղի ունեցավ գյուղում վերջին տարիներս: Կոլտնտեսա-
յին համագումարում կանանց ակտիվությունը բացա-
ռիկ չափով մեծ էր: Յեվ դա հասկանալի չէ: Կոլտնտե-
սային կարգերի հաղթանակը վոչ միայն ազատություն
տվեց կանանց—մանր անհատական տնտեսության մամ-
լակից ու անելանելի դրությունից, այլ և իրական իրա-
վահավասարություն տղամարդու հետ՝ ընտանիքում:
Հարվածային կոլտնտեսականների համագումարին մաս-
նակցող կանայք՝ կոլտնտեսուհիներն իրենց ճառերում
ու զրույցներում իրավամբ պարծենում էին հարյուրա-
վոր այն աշխուրհերով, վորոնք վաստակել էին նրանք
տղամարդկանց հետ հավասարապես՝ հանրային տնտե-
սության մեջ: Նրանք իրավամբ պարծենում էին, վոր
իրենք տղամարդկանցից վատ չեն ղեկավարում կոլտն-
տեսության գործերը, վորպես կոլտնտեսությունների
նախագահներ կամ բրիգադիրներ: Նրանք իրենց ուրինա-
կով ցույց էին տալիս, թե ինչպես կոլտնտեսային կար-
գերը վերջ դնելով անհատական գյուղացիական տնտե-
սության հետամնացությանն ու աղքատությանը, միև-
նույն ժամանակ վոչնչացրել են կնոջ դարավոր ճնշման
հիմքը գյուղացիական ընտանիքում: Կնոջ համար գյու-
ղում իրավահավասարություն նվաճեց Սորհրդային իշ-
խանությունը, յերբ նա ոգնեց գյուղացիներին՝ անցնե-
լու անհատականի ուղուց կոլտնտեսային ուղին: Այն-
ինչ, ընդամենը դեռ մի քանի տարի առաջ, մեր բոլոր

թշնամիները հույս ունեյին, թե նրանց կհաջողվի հա-
նել կանանց կոլտնտեսությունների դեմ: Ինչպես միշտ,
այստեղ ևս մեր թշնամիները դառնազին սխալվեցին ի-
րենց հաշիվներում:

Համագումարում հանդես յեկած կոլտնտեսական-
ներն ու կոլտնտեսուհիները պատմում էին Հյուսիսա-
յին Կովկասի դաշտերի մասին, վորոնք, չնայած 1934
թվականի յերաշտին՝ տվին 160 փ. ցորեն մի հեկտարից
(Ստալինի անվան կոլտնտեսությունը Կարարդինո-
Բալկարյան մարզում, զեկուցեց ընկ. Մերեժկոն), Ա-
րեւմտյան Սիրիերի դաշտերի մասին, վորոնք 1934 թվա-
կանին տվել էին 120 փութ ցորեն մի հեկտարից («Նոր
սուղի» կոլտնտեսություն, զեկուցեց ընկեր Ջինկովան),
Կալինինի մարզի վուչի ցանքերի մասին, վորոնք մի
հեկտարից տվել էին 27 փութ վուչ-թել («Գիգանտ»
կոլտնտեսություն, զեկուցեց ընկ. Բարբաչեվը), Թուրք-
մենստանի բամբակի դաշտերի մասին, վորտեղ մի հեկ-
տարից հավաքվել ու հանձնվել էր պետությանը 190
փութ բամբակ («Բուլչեիկ» կոլտնտեսություն, զեկու-
ցեց ընկեր Աղա-Յուսուբ-Ալին), Բաշկիրիայի անաս-
նապահական ֆերմաների մասին, վորտեղ մի տարվա
ընթացքում վոչ մի մատղաշ անասուն չէր սատկել (Կա-
լինինի անվան կոլտնտեսություն, զեկուցեց ընկ. Ախի-
յարովը), այն կովերի մասին, վորոնք Հյուսիսային
Յերկրում տվել էին 6687 կիլոգրամ կաթ («Կարմիր
Հոկտեմբեր» կոլտնտեսություն, զեկուցեց ընկ. Ֆո-
մինան):

Իհարկե, համագումարում ներկայացված էին լա-
վագույն կոլտնտեսությունները: Սակայն նրանք լավա-
գույնն էին դարձել վոչ թե այն պատճառով, վոր ունե-
յին ինչ վոր հատուկ տեխնիկա կամ հող կամ առանձնա-
հատուկ մի կլիմա: Այդ կոլտնտեսություններն ունեյին
նույն տրակտորներն ու մեքենաները, վորոնք կային
նաև մյուս կոլտնտեսություններում: Այդ կոլտնտեսու-
թյուններին հատկացված է ոգտադործելու համար պե-
տական նույնպիսի հող, ինչպիսին հատկացված է նաև

մյուս կոլտնտեսություններին: Այդ կոլտնտեսությունները, ինչպես և մյուսները, կազմակերպվել են վերջին 4-5 տարում: Առաջավոր կոլտնտեսությունների ամբողջ տարբերությունն այն է, վոր նրանք կարողացել են ոգտագործել խոշոր տնտեսության առավելությունները, նրանք կարողացել են լավ ոգտագործել մեքենաները, իսկ վոր գլխավորն է՝ այդ կոլտնտեսություններում աճել են փորձված, հուսալի ու ստուգված ղեկավարներ և այդ կոլտնտեսությունների անդամները սովորել են պահպանել հանրային դույզը և ազնվորեն աշխատել:

Այս բանը բավական յեղավ, վորպեսզի առաջավոր կոլտնտեսություններում թե՛ հայահատիկ, թե՛ միս, թե՛ յուղ արտադրվի կրկնապատիկ ու յեռապատիկ ավելի, քան նույն այդ մարդիկ արտադրում էին առաջ, յերբ ապրում էին վորպես ցիր ու ցան մանր տնտեսություններ:

Կոլտնտեսականների համամիութենական յերկրորդ համագումարի նշանակությունն այն է, վոր այժմ այդ բոլորի մասին մեր ամբողջ յերկրին պատմել են իրենք գյուղացիները, առաջավոր կոլտնտեսությունների ղեկավարներն ու հարվածայինները: Հարվածային կոլտնտեսականների համագումարը բոլոր կոլտնտեսականներին ու կոլտնտեսուհիներին միանգամ ևս ցույց տվեց, վոր ունևոր ու կուլտուրական կյանքի բանալին գտնվում է նրանց սեփական ձեռքին:

Այդպիսի առաջավոր կոլտնտեսությունները դեռևս մեծամասնություն չեն կազմում: Ամբողջ բանն այն է, վոր առաջավորների փորձը վորքան հնարավոր է արագորեն հաղորդվի բոլոր կոլտնտեսություններին: Ահա թե նախ և առաջ ինչու պահանջվեց գյուղատնտեսական արտելի նոր Որինակելի կանոնադրությունը:

Կանոնադրության հարցը — դա այն հարցն է, թե ինչպես պետք է բարձրացնել բոլոր կոլտնտեսությունները տասնյակ հազարավոր առաջավոր կոլտնտեսությունների մակարդակին, վորոնք արդեն դարձել են

բուլչեիկյան, վորոնք արդեն ունևոր են դարձրել իրենց անդամներին: Գյուղատնտեսական արտելի 1930 թվականի հին Որինակելի կանոնադրության մեջ գրված էին այն կանոնները, վորոնց հիման վրա գյուղացիները մանր անհատական տնտեսությունից անցնում էին խոշոր հանրային տնտեսության: Այժմ գյուղացիների մեծամասնությունը կոլտնտեսությունների մեջ միավորելու հարցը լուծված է հաստատապես ու անդառնալիորեն: Ուստի նոր կանոնադրությունը պետք է առի, թե ինչպես պետք է ապրել ու աշխատել արտելում, ինչպես կարելի յե ավելի լավ կազմակերպել կոլտնտեսային արտադրությունը և կոլտնտեսային կյանքը:

II. ԿՈՆՏՆՏԵՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԲԱՂԵՅՐԱԾ ՀՈՂԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հարվածային կոլտնտեսականների համագումարում յես իմ զեկուցման մեջ մի քանի որինակներ եյի բերել, թե ինչպես տեղական իշխանությունները կոլտնտեսություններից վոմանց հողերը կտրում են հողուտ մյուս կոլտնտեսությունների կամ խորհտնտեսությունների, թե ինչպես մինչև այժմ ել կոլտնտեսություններում հաճախ պահպանվում ե հողային անբարեկարգությունը, թե ինչպես կոլտնտեսության հողերի արանքն ուրիշ հողամասեր են ընկնում, թե ինչպես առանձին հողամասերը հեռու յեն ընկնում: Համագումարի հանձնաժողովի նիստում պատգամավորները բերում եյին հողային անկանոնությունների, հողամասերի իրարից բաժանված լինելու աղաղակող որինակներ: Այլևս անհնարին ե հանդուրժել այդ, յեթե մենք յրջորեն ուզում ենք հասնել բարձր բերքատվության:

Մեր աշխատողներից շատերը դեռ մինչև այժմ ել չեն հասկանում, վոր յուրաքանչյուր հողամաս իրեն հատուկ խնամքն ե պահանջում:

Բոլորն ել գիտեն, վոր ցրտահերկը, ցել անելը, վաղ ցանելը՝ նշանակում ե շատ բան անել բերքը բարձրացնելու համար: Սակայն, վորպեսզի ցելում ցանած ցորենը բարձր բերք տա, պետք ե ցելերի հողամասերը իրոք մաքուր պահել: Դրա համար հարկավոր ե ամառվա ընթացքում մի քանի անգամ զանազան ժամկետներում ու զանազան գործիքներով մշակել ցելը՝ նայած թե ինչպիսի մուլախոտերով են վարակված դաշտերը:

Այլ բան ե, յեթե դաշտը վարակված ե վայրի առինջով, այդտեղ ցելը պետք ե ավելի խորը հերկել, ապա մի քանի անգամ կրկնավար անել արմատահան դութահով, ամեն անգամ կտրելով վայրի առինջի արմատները, պատերազմ մղելով նրա դեմ մինչև նրա ուժտապառ լինելը: Այլ բան ե, յերբ դաշտը վարակված ե սվինորոյով, այստեղ ես պետք ե խորը հերկ անել, սակայն հարկավոր ե մշակել զսպանակավոր կուլտիվատորով, հանել արմատները, հավաքել ու չորացնել արեվի տակ: Յեղն այդպես մշակելու համար, հարկավոր ե գիտենալ, թե ինչ մուլախոտով ե վարակված ամեն մի դաշտ: Այդ չի գիտենա այն կոլտնտեսությունը, վորի հողից այսոր մի հողամաս են կտրել հողուտ հարևան կոլտնտեսության կամ խորհտնտեսության, իսկ վաղը նալն կոլտնտեսությանը մի հողամաս են հատկացրել մյուս կոլտնտեսությունից:

Վաղ ցանք կարելի յե կատարել միայն մի դեպքում՝ չսպասել մինչև վոր հողն ամբողջովին պատրաստ լինի, ոյլ ցանել յուրաքանչյուր առանձին հողամասում հողը պատրաստ լինելուն զուգընթաց. այդ կարող ե անել միմիայն այն կոլտնտեսությունը, վորը մի շարք տարիների փորձով գիտե, թե վոր հողամասերում ավելի շուտ ե հալվում ձյունը, վորտեղ կան ավազոտ հողամասեր:

Լավ բերք ստանալու համար անհրաժեշտ ե մտցնել ու պահպանել ցանքաշրջանառություն: Որինակ լավագույն 7 դաշտյան ցանքաշրջանառության պայմաններում, Վորոնեժի ե Վիննիցիայի մարզերում, ճակնդեղը ցանում են յորիակերպ խոտերից հետո: Այդպիսի ցանքաշրջանառության բոլոր ոգուտները կարելի յե ստանալ այն դեպքում, յեթե ամբողջ յոթը տարվա ընթացքում խստիվ պահպանվի յուրաքանչյուր դաշտում մշակույթների փոխանակության համար սահմանված կարգը: Մշակույթների հաջորդումը յերկրորդ ե յերրորդ անգամ կրկնելիս հողը կտա ճակնդեղի ավելի ու ավելի մեծ բերք:

Բամբակացան շրջանում առվույտի հողամասի պարտացումը սուպերֆոսֆատով կանդրադառնա բամբակի բերքի բարձրացման վրա 4—5 տարուց հետո:

Մրգատու այգին անկվելուց 10—15 տարուց հետո լրիվ կտա այն ամենն, ինչ վոր կարող ե տալ:

Ծառերի և թփերի արմատահանումը հսկայական քանակությամբ աշխատանք ե պահանջում: Կոլտնտեսու թյունը լրջորեն կգիմի այդ ձեռնարկմանը, յեթե հալատացած լինի, վոր տասնյակ տարիներ կողտադործի բերքը և հողը կգտնվի նրա անժամկետ ոգտադործման մեջ:

Անտառաչերտերը լիակատար պաշտպանություն են տալիս դաշտերին՝ անկվելուց միայն 10—20 տարի հետո:

Մի խոսքով, յեթե մենք ուզում ենք հողից ստանալ վոչ թե հացահատիկի 50 փութ վտիտ բերք, վոչ թե վուչ-թելի վողորմելի 15 փութ բերք, այլ տարեց-տարի հացահատիկի 100 փութ բերք, թելատու-վուչի 30 փութ բերք, պետք ե տարեց-տարի համառորեն ու համբերությամբ գործադրենք կոլտնտեսային հոգում տիրող հոգատար խնամքը: Իսկական տեր կարելի յե համարել միայն այն կոլտնտեսությունը, վորը ճանաչում ե իր հողի յուրաքանչյուր մասը և տարեց-տարի աշխատում ե նրա բարելավման համար: Վորպեսզի կոլտնտեսությունն իրեն իսկական տեր զգա, հարկավոր ե, վոր ամեն մի կոլտնտեսական լիովին վստահ լինի, թե հողը նրան կմնա բնդմիշտ, վոր նա և նրա զավակները կոզավեն հանրային դաշտում իրենց կատարած աշխատանքի արդյունքներից:

Ահա թե ինչու գյուղատնտեսական արտելի Որինակելի կանոնադրության այն նախագծում, վորը ներկայացվեց համագումարին քննության, նախատեսված եր, վոր արտելի ոգտադործած հողը «ամրացվում ե արտելին՝ անժամկետ ոգտադործման համար»:

Ընկերներ՝ Ստալինը, Մոլոտովը, Կալինինը, Վորոշիլովը, Կազանովիչը համագումարի հանձնաժողովի նիստում ուշադրությամբ լսում եյին կոլտնտեսականների ճառերը: Կոլտնտեսականները պատմում եյին, թե

ինչպես մեզ մոտ յերբեմն կտրատում են պետության կողմից կոլտնտեսությանն ոգտադործելու համար տրամադրված հողը: Դրանից հետո ընկ. Ստալինն անհրաժեշտ համարեց ե'լ ավելի պարզորոշ, ե'լ ավելի հաստատապես ասել հողը կոլտնտեսությանն ամրացնելու մասին: Նա, հանձնաժողովի բոլոր անդամների ընդհանուր հավանությամբ, առաջարկեց ասել, վոր կոլտնտեսության զբաղեցրած հողը «ամրացվում ե արտելին՝ անժամկետ ոգտադործման համար, այսինքն՝ ընդմիշտ»:

Գյուղատնտեսական արտելի Որինակելի կանոնադրությունը հաստատված ե ժողովրդական Կոմիսարների խորհրդի և կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի կողմից: Նշանակում ե հարվածային կոլտնտեսականների համագումարի այն վորոշումը, վորով ընդմիշտ կոլտնտեսություններին ամրացվում ե նրանց զբաղեցրած հողը, որենք ե դարձել:

Հողի հարցում վոչ մի սխալ մեկնաբանում թույլ չտալու և որենքի անչեղ կատարումն ապահովելու համար, ամեն մի կոլտնտեսությանը տրվելու յե պետական մի ախտ՝ հողն ընդմիշտ ոգտադործելու մասին: Որինակելի կանոնադրությունը զրա մասին ասում ե հետևյալը.

«Խորհուրդների շրջանային գործադիր կոմիտեն յուրաքանչյուր արտելի տալիս ե պետական մի ախտ՝ հողն անժամկետ ոգտադործելու համար: Այդ ախտում վորոշվում են արտելի ոգտադործած հողի չափն ու ճիշտ սահմանները, ընդ վորում այդ հողերի կրճատում չի թույլատրվում, այլ թույլատրվում ե միայն ավելացնել դրանք՝ կամ պետական ֆոնդի ազատ հողերի հաշվին, կամ թե մեկտնտեսի զբաղեցրած ավելորդ հողերի հաշվին, այն պայմանով, վոր արտելի հողաչերտերի մեջ վոչ մի այլ հողաչերտ չմտնի» («Որինակելի կանոնադրության» յերկրորդ կետից):

Դրանով բանվորագյուղացիական պետությունը կոլտնտեսություններին ասում ե՝ դուք արդեն ավարտում եք ցիր ու ցան մանր գյուղացիական տնտեսություններ-

ըի հողամասերի միացումը կոլտնտեսությունների խոշոր հողային մասսիվներում: Պետությունն այդ հողնամրացնում է կոլտնտեսություններին ընդմիշտ ոգտագործելու: Այժմ աշխատեցեք այդ հողի վրա, այնպես, վոր տարեց-տարի ավելանա հողի պտղաբերությունը, վոր անհետանան մոլախոտերը, վոր տարեց-տարի աճի կոլտնտեսությունների և մեր ամբողջ հայրենիքի հաբըստությունը:

Սակայն, դա հողի շինարարության հարցի միայն մի կողմն է: Յեթե Որինակելի կանոնադրությունը սահմանափակվեք միայն ընդմիշտ ամրացնելով յուրաքանչյուր կոլտնտեսությանը՝ նրա զբաղեցրած հողը, ապա դրանով կատարված կլինեք գործի միայն կեսը: Դրանով վոչնչացված կլինեք հողի դիմադրելությունը կոլտնտեսությունների միջև, բայց դեռ պահպանված կլինեք հողի դիմադրելությունը կոլտնտեսությունների ներսում: Հողի ներկոլտնտեսային դիմադրելությունը նշանակում է, վոր բրիգադները և կոլտնտեսականները տարեցտարի աշխատում են կոլտնտեսային հողի գանազան մասերում: Այդպիսի դիմադրելությունը կոլտնտեսային ունևորության վոխերիմ թշնամին է: Մենք վոչինչ չկարողացանք անել հողի այդ դիմադրելության դեմ 1930 թվականին: Այն ժամանակ հողի մեծ մասը դեռ գտնվում էր մենատնտեսների ձեռքին: Այն ժամանակ դյուղացիները կոլտնտեսությունը հասկանում էյին, վորպես խմբովին կատարվող աշխատանք: Այբրան է այժմ: Համարյա ամեն մի կոլտնտեսություն բաժանվեց բրիգադների: Կոլտնտեսային բրիգադներն արդեն մեծ մասամբ բաղկացած են մարդկանց մշտական կազմից: Այժմ յուրաքանչյուր կոլտնտեսություն, բաժանելով հողը ցանքաչրջանառության դաշտերի՝ կարող է և պետք է ցանքաչրջանառության յուրաքանչյուր դաշտում յուրաքանչյուր դաշտավարական բրիգադին տա մշտական հողամաս: Այն ժամանակ գործնականորեն վերջ կտրվի հողի դիմադրելությանը:

Հենց այդպես ել գրված է դյուղատնտեսական արտելի Որինակելի կանոնադրության մեջ՝

«Արտելի հողերը բաժանվում են դաշտերի՝ հաստատված ցանքաչրջանառության համաձայն: Ցանքաչրջանառության դաշտերում դաշտավարական յուրաքանչյուր բրիգադին մշտական հողամաս է ամրացվում ցանքաչրջանառության ամբողջ ժամանակաչրջանի համար» («Որինակելի կանոնադրության» 3-րդ կետից):

Այդ պետք է կատարվի յուրաքանչյուր կոլտնտեսության մեջ առանց վորեւեք բացառության: Այն ժամանակ մենք կդենեք կոլեկտիվ տնտեսությունն իրոք կուլտուրական դարձնելու հիմքը և արագորեն առաջ կշարժենք բերքը բարձրացնելու գործը:

Ի դեպ մի դիտողություն մեր հողային որդաններին մասին: Նրանք առայժմ տարորինակ հանգստություն և չուրթյուն են պահպանում այդ վորոշման կատարման շուրջը: Որինակելի կանոնադրության մեջ ասված է, թե անթույլատրելի յե վորեւեք միջնաչերտություն: Պարզ է, վոր յուրաքանչյուր կոլտնտեսություն հողն ընդմիշտ ոգտագործելու համար պետական ակտ ստանալիս, պահանջելու յե և պետք է պահանջի վերացնել և՛ միջնաչերտությունը, և՛ հողերի ձգվածությունը, և՛ հեռավորությունը, յեթե դրանք դեռ պահպանվել են: Ո՞վ կուղենա ընդմիշտ ամրացնել իրեն միջնաչերտությունը: Նշանակում է հարկավոր է առանց մի որ կորցնելու մորիլիզացիայի յենթարկել բոլոր հողաչինարարներին ու հողային տեխնիկներին՝ կոլտնտեսությունների սահմանները քարտեզի վրա առնելու համար: Հարկավոր է յերևան բերել հողային անբարեչինության բոլոր դեպքերը՝ վորպեսզի անհապաղ սկսել վերացնել դրանք:

Յեթե հողային որդանները, ինչպես հարկն է բոլրչեկորեն ձեռնամուխ չլինեն այդ գործին, կառավարությունը նրանց խստիվ կպատժի:

Ընկ. Ստալինը հարվածային կոլտնտեսականների առաջին համագումարում խոսել եր կոլտնտեսուհիների նկատմամբ տեղի ունեցող փոքրիկ թյուրիմացության մասին: Գործը վերաբերում եր կովին: Դա 1930 թվականի սկզբին եր: Մենք հարթեցինք այդ թյուրիմացությունը: Հարցը լուծվեց ընկ. Ստալինի նախաձեռնությամբ: Այն ժամանակ գյուղատնտեսական արտելի ուրինակելի կանոնադրության մեջ գրվեց՝ յուրաքանչյուր կոլտնտեսականի տնտեսությանը թույլատրվում ե ունենալ մի կով՝ անձնապես ոգտադործելու համար:

Այդ ժամանակից ի վեր, կոլտնտեսային շինարարության հսկայական փորձ կուտակվեց: Ամրացավ արտադրության հանրային հիմքը կոլտնտեսություններում:

Հարվածային կոլտնտեսականների յերկրորդ համագումարը հավաքվեց 17-րդ կուսակցական համագումարից մի տարի հետո: Կուսակցության համագումարում ընկ. Ստալինն իր արտասանած ճառում ցույց տվեց, վոր գյուղատնտեսական արտելը հենց այն պատճառով դարձավ կոլտնտեսային շարժման հիմնական ձև, վոր նա ճիշտ ե համակցում կոլտնտեսականների անձնական, կենցաղային շահերը նրանց հասարակական շահերի հետ:

Հարվածային կոլտնտեսականների յերկրորդ համագումարի հանձնաժողովի նիստում, ընկ. Ստալինը լենինյան ուղղամտությամբ և պարզորոշությամբ նորից ցույց տվեց, վոր արտելը չի ժխտում կոլտնտեսականների անձնական շահերը: Արտելում կոլտնտեսականների անձնական շահերը համակցվում են հասարա-

կականի հետ: Արտելն անտիճանաբար ու համբերատարությամբ հարմարեցնում ե կոլտնտեսականների անձնական շահերը հասարակական շահերին, բայց հաշվի չե առնում դրանք: Ընկ. Ստալինը համադրումարի հանձնաժողովում այսպես ասաց.



«Յեթե դուք ուզում եք ամրացնել արտելը, յեթե դուք ուզում եք ունենալ մասսայական կոլտնտեսային մի շարժում, վորը պետք ե ընդգրկել միլիոնավոր տնտեսություններ և վոչ թե միավորներ ու հարյուրավորներ, յեթե դուք ուզում եք հասնել դրան, — դուք ներկա պայմաններում պետք ե բացի կոլտնտեսականների ընդհանուր շահերից, անպայման հաշվի առնեք նաև նրանց անձնական շահերը»:

Յեկնելով դրանից, ընկ. Ստալինն ուղղեց մի շարք այն առաջավոր կոլտնտեսականներին, վորոնք պահանջում եյին ավելի կրճատել տնամերձ հողամասը կամ կոլտնտեսականի տնտեսության անհատական անասունները:

Ընկ. Ստալինը տաք վիճաբանություն ունեցավ նրանց հետ: Նա հաշվի առնելով, վոր այդ դեպքում նրանք արտացոլում են վոչ թե ամբողջ կոլտնտեսային ճառագայի, վոչ թե նրա մեծամասնության, այլ միայն առաջավոր փոքրամասնության տրամադրությունն ու պահանջը, ուղղակի ասաց նրանց.

«Դուք սմենեին ել նկատի չեք առնում կոլտնտեսականների անձնական շահերը, յերբ ասում եք, թե կոլտնտեսականին չպետք ե տալ մի տասերորդ հեկտարից ավելի տնամերձ հողամաս: Վոմանք կարծում են, թե կով չի կարելի տալ, վոմանք ել կարծում են, թե մայր խոզ չի կարելի տալ: Յեվ ընդհանրապես դուք ուզում եք սեղմել կոլտնտեսականին: Այդ չի լինի: Դա սխալ ե:

«Դուք առաջավոր մարդիկ եք: Յես հասկանում եմ, վոր դուք շատ եք հոգ տանում կոլտնտեսային կարգերի մասին, կոլխոզային տնտեսության մասին: Բայց մի՞թե բոլոր կոլտնտեսականներն ել այնպիսիք են, ինչպես դուք: Չե՞ վոր դուք փոքրամասնություն եք կոլտնտեսություններում: Մեծամասնությունը մի քիչ այլ կերպ ե մտածում:



Պե՞տք ե այդ հաշվի առնել, թե՞ վոչ: Յես կարծում եմ, վոր պետք ե հաշվի առնել»:

«Յեթե ձեզ մոտ արտելում դեռ մթերքների առատություն չկա և դուք առանձին կոլտնտեսականներին, ներանց ընտանիքներին չեք կարող տալ այն ամենը, ինչ վոր հարկավոր ե նրանց, ապա կոլտնտեսությունը չի կարող իր վրա վերցնել, վոր բավարարի և՛ հասարակական, և՛ անձնական կարիքները: Այն ժամանակ ավելի լավ ե ուղղակի ասել, թե ահա աշխատանքի այսինչ բնագավառը հանրային ե, իսկ այսինչը՝ անձնական: Ավելի լավ ե ուղղակի, բացե ի բաց և ազնվորեն թույլ տալ, վոր կոլտնտեսական ծուխը պետք ե ունենա իր անձնական տնտեսությունը, վոչ մեծ, բայց անձնական: Ավելի լավ ե յեղնել նրանից, վոր կա հանրային, մեծ, խոշոր և վճռական արտելային տնտեսություն, վորն անհրաժեշտ ե հասարակական կարիքները բավարարելու համար, և դրա կողքին, կա վոչ մեծ անձնական տնտեսություն, վորն անհրաժեշտ ե կոլտնտեսականի անձնական կարիքները բավարարելու համար: Քանի վոր կա ընտանիք, յերեսաներ, անձնական պտահաններ ու անձնական ճաշակ, ապա չի կարելի դրանք հաշվի չառնել: Յե՛վ դուք իրավունք չունեք հաշվի չառնելու կոլտնտեսականների անձնական, կենցաղային շահերը: Առանց դրան հնարավոր չե ամրապնդել կոլտնտեսությունները: Կոլտնտեսականների անձնական շահերի համակցումը կոլտնտեսությունների հասարակական շահերի հետ՝ ահա թե վորտեղ ե կոլտնտեսությունների ամրապնդման բանալին»:

Այդպես ե սովորեցրել աշխատավոր ժողովրդի առաջնորդ ընկ. Ստալինն առաջավոր կոլտնտեսականներին՝ ղեկավարել կոլտնտեսային մասսաներին, առաջ տանել կոլտնտեսական մասսաներին, ամրացնել կոլտնտեսային կարգերը: Ընկ. Ստալինը պահանջում եր առաջավորներին՝ չկտրվել մասսաներից, ավելորդ և բոլորովին անտեղի դեգոտնություն չառաջացնել, այլ հաշվի առնել մասսաների տրամագրություններն ու պահանջները, ինչպես միշտ Լենինն եր անում:

«Այստեղ պետք ե հաշվել վոչ թե մինչև հաղարներ, ինչպես ըստ եյության հաշվում ե պրոպագանդիստը՝ փոքրիկ խմբակի անդամը, վոր դեռ չի ղեկավարել մասսաներին: Այստեղ պետք ե հաշվել միլիոններով և տասնյակ միլիոններով» (Լենին, հատոր 25, էջ 230):

Յեղնելով ընկ. Ստալինի ցուցումներին՝ կոլտնտեսականների համագումարն Որինակելի կանոնադրության մեջ գրեց, թե ինչպե՞ս պետք ե ամրապնդել արտելի հանրային տնտեսությունը՝ կոլտնտեսությունների հենց գոյության ու նրանց աճման այդ հիմքը: Դրա հետ միասին, կանոնադրությունը վորոչեց կոլտնտեսականների անձնական տնտեսության չափը, տնամերձ հողամասի չափը, և կոլտնտեսականների տնտեսության կողմից անձնապես ոգտագործվող անասունների քանակը:

Գործի մյուս կողմը, վորն արտասովոր պարզ արտահայտություն գտավ այդ համագումարում, այն ե, վոր իՍՆՄ-ն մի հսկայական յերկիր ե՝ աշխարհիս մեկվեցերորդ մասը, և մեր յերկրի զանազան մասերում գոյություն ունեն ամենաբազմապիսի պայմաններ: Յեթե Որինակելի կանոնադրությունը հաշվի չառնեղ զանազան շրջանների առանձնահատկություններն ու շահերը, ապա նա չեղ կարող լինել գյուղատնտեսական արտելի Որինակելի կանոնադրություն ամբողջ իՍՆՄ-ի համար: Բանը վոչ միայն մարզերի կամ յերկրների, կամ հանրապետությունների առանձնահատկությունները հաշվի առնելն ե, վորեւե ընդհանուր ձեռնարկում գործադրելիս: Այդպես ե դրված նույնպես մարդի կողմից առանձին շրջանները ղեկավարելու, շրջանի կողմից կոլտնտեսությունները ղեկավարելու հարցը:

1. ՏՆԱՄԵՐԶ ՀՈՂԱՄԱՍԻ ԶԱՓԻ ՄԱՍԻՆ

Ակսենք տնամերձ հողամասի չափին վերաբերյալ հարցից: Գյուղատնտեսական արտելի Որինակելի կանոնադրությունը նախատեսում ե հանրայնացված հողերից յուրաքանչյուր կոլտնտեսականի տնտեսությանն անձնապես ոգտագործելու համար հատկացնել փոքր

հողամաս, վորպես տնամերձ հող (բանջարանոց, պարտեզ): Այդ ե որինակելի կանոնադրության սահմանած քնդհանուր կանոնը, իսկ յերբ Որինակելի կանոնադրությունն անցնում ե այն հարցին, թե ինչ ե ներկայացնում այդ փոքր հողամասը զանազան պայմաններում, ապա նա նշում ե զանազան չափեր տարբեր շրջանների համար: Լենինգրադի կամ Մոսկվայի մոտ՝ միանգամայն բավական կլինի կոլտնտեսականի տնտեսությանը հատկացնել անձնապես ոգտադործելու համար քառորդ հեկտար տնամերձ հողամաս: Քառորդ հեկտարով նա կկարողանա բավարարել իր մասնավոր չահը, առանց վնաս տալու հանրային չահին: Բայց յեթե Լենինգրադի կամ Մոսկվայի մոտ կոլտնտեսականի տնտեսությանն անձնապես ոգտադործելու համար հատկացվի մի հեկտար, կամ նույնիսկ կես հեկտար տնամերձ հողամաս՝ բանջարանոցի համար, ապա այդպիսի կոլտնտեսականն անտարակույս կթքի հանրային տնտեսության վրա, վորովհետե նա այդ տնտեսության կազմը չի զգա:

Փորձեցեք Կուրանում կոլտնտեսականի տնտեսությանը հատկացնել քառորդ հեկտար, կամ նույնիսկ կես հեկտար տնամերձ հողամաս: Կոլտնտեսականը պատրաստ կլինի լրջորեն գծովելու ձեզ հետ ե իր տեսակետից արդարացի կլինի: Նրա մոտ կես հեկտար տարածություն ե բռնում հաճախ միայն պարտեզը: Այնտեղ մինչև այժմ ել քիչ չեն այնպիսի կոլտնտեսականների տնտեսություններ, վորոնք ունեն յերկու հեկտար տնամերձ հողամաս: Այդ անթույլատրելիորեն շատ ե: Դա այդպիսի կոլտնտեսականների համար կոլտնտեսությունը դարձնում ե միմիայն խաբեյությամբ կոլտնտեսային արտոնություններից ոգտվելու մի միջոց: Սակայն Կուրանում տնամերձ հողամասի չափը սահմանել քառորդ կամ նույնիսկ կես հեկտար, նույնպես չի կարելի: Այն ժամանակ պետք կլինի վերցնել կոլտնտեսականի տնտեսության պարտեզի մի մասը, չխոտելով այն մասին, վոր այդ դեպքում նրա մոտ հող չի մնա՝ բանջարեղեն, գետնախնձոր, կամ անասունների համար

արմատապտուղ ցանելու նպատակով: Այստեղ ակներեհ, վոր պետք ե կոլտնտեսականի տնտեսությանը հատկացնել մեկ հեկտար տնամերձ հողամաս:

Յեթե վերցնենք Ուզբեկստանի շրջանները, վորտեղ տնամերձ հողամասը ջրովի յե, ապա քառորդ հեկտար տնամերձ հողամասը լիովին բավական ե: Կոլտնտեսականը կարող ե ապահովել իրեն բանջարեղենով, սեխով, և անասուններին՝ կերով: Սակայն Ուզբեկստանում կան այնպիսի շրջաններ, վորտեղ տնամերձ հողամասը ջրովի չե: Յեթե այդտեղ՝ կոլտնտեսականի տնտեսությանը հատկացնեք քառորդ հեկտար տնամերձ հողամաս, ապա նա այնպիսի աղմուկ կբարձրացնի, վոր Մոսկվայում կլսվի: Յեվ ճիշտ վարված կլինի: Այստեղ պետք ե տալ առնվազն կես հեկտար:

Վերցրեք Հյուսիսային յերկրի Խորմոգորի կամ Վոլոգդայի շրջանները: Այդտեղ հնուց ի վեր շատ զարգացած ե անասնապահությունը, ուստի արդտեղ քառորդ հեկտարը չի բավականացնի կոլտնտեսականի տնտեսության տնամերձ հողամասի համար: Պարզ ե, վոր Զավոլոժյայում, վորտեղ կլիման չորային ե, պետք ե սահմանել մի հեկտար տնամերձ հողամաս կոլտնտեսականի տնտեսության համար, իսկ Վորոնեժի և Կուրսկի մարզերում՝ մի հեկտարից մինչև կես հեկտար՝ նայած շրջանի պայմաններին:

Այդ բոլորը, ընկ. Ստալինի առաջարկով, հաշվե առավ հարվածային կոլտնտեսականների յերկրորդ համագումարը: Համագումարը հրաժարվեց մի արշինով չափել մեր ամբողջ յերկիրը ե տարրեր շրջանների համար տնամերձ հողերի տարրեր չափել վորոշեց:

Որինակելի կանոնադրության մեջ ասված ե՝

«Կոլտնտեսականի տնտեսության կողմից անձնապես ոգտադործվող տնամերձ հողամասի չափը (չհաշված բրնակելի շենքերի բռնած հողը) կարող ե լինել մի քառորդ հեկտարից մինչև կես հեկտար, իսկ առանձին շրջաններում՝ նաև մինչև մի հեկտար, նայած մարդային ու շրջանային պայմաններին, վորոնք սահմանվում են դաշնակից հան-

բապետութիւններէ հողժողովո՞ւմ տնտէրը՝ ԽՍՀՄ-ի Հողժող-
կոմատի ցուցումներէ հիման վրա» («Որինակելի կանոնա-
դրութեան» յերկրորդ կետից) :

2. ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՁԱՓԸ

Հիմնականի ու գլխավորի՝ այսինքն կոլտնտեսային
անասնապահական փերմաների հետ միասին՝ անհրա-
ժեշտ ե յուրաքանչյուր կոլտնտեսականի տնտեսութեան
մեջ զարգացնել լրացուցիչ ոժանդակ անձնական անաս-
նապահութիւն: Նա պետք ե բավարարի կոլտնտեսա-
կաններէ անձնական շահերը: Կոլտնտեսականներէ տըն-
տեսութիւններէ կողմից անձնապէս ոգտագործվող ա-
նասուններէ թվի նկատմամբ ավելի մեծ բաղձադա-
նութիւն կա շրջաններէ միջև, քան տնամերձ հողամա-
սի չափի նկատմամբ: Ընկ. Ստալինն այդ որինակով
կրկին սովորեցնում ե մեզ՝ տնտեսութեան ու կառավար-
ման զանազան ճյուղերում աշխատողներէս, վոր դեկա-
վարենք վոչ թե հավասարաբաւական յեղանակով, այլ հաշ-
վի առնելով զանազան շրջաններէ առանձնահատկու-
թիւնները:

Վերցնենք հողագործական վոր շրջանը կուզեք,
վորտեղ հողագործութիւնը վնասական դեր ե խաղում
տնտեսութեան մեջ՝ լինի դա հացահատիկային, ճակըն-
դեղացան, վուշացան, գետնախնձորային — բանջարա-
նոցային, կամ բամբակացան շրջան: Այստեղ հողագոր-
ծութիւնը կոլտնտեսականից պահանջում ե նրա աշխա-
տանքային ժամանակի ահագին մասը: Այդ շրջանե-
րի հողն ե՛լ ավելի յե հերկված: Վարելահողը գրա-
վում ե հողի մեծ մասը և միայն աննշան մասը բռնում
են խոտհարքներն ու արոտավայրերը: Այդ շրջանե-
րում կոլտնտեսականներէ տնտեսութիւններում անձնա-
պէս անասուններ ունենալու համար պետք ե սահմանվի
ավելի փոքր նորմա, քան անասնապահական շրջանե-
րում: Յեթե այդ շրջաններում մենք սահմանելինք
անձնապէս անասուններ ունենալու նույն նորման,
վորը սահմանում ենք անասնապահական շրջան-

ների համար, ապա ակնհայտորեն կթուլացնելինք
հողագործութիւնը և կկտրելինք այն արմատը,
վորով գյուղատնտեսական արտելում սնվում եք
ամեն ինչ՝ և հիմնական հանրային տնտեսութիւնը, և
կոլտնտեսականի անձնական լրացուցիչ տնտեսութիւ-
նը: Միեւնույն ժամանակ հողագործական այդ շրջանե-
րում կոլտնտեսականի տնտեսութեան կողմից անձնա-
պէս ոգտագործվող անասուններէ նորման ավելացված
ե համեմատած անցյալում՝ 1930 թվականի որինակելի
կանոնադրութեամբ նախատեսվածի հետ: Մենք այդ կա-
րողացանք անել այն պատճառով, վոր համեմատած ան-
ցյալ տարիներէ հետ, այժմ ամբապնդվել ե հանրային
սեփականութիւնը՝ կոլտնտեսային արտադրութեան
հիմքը: Կոլտնտեսականներէ տնտեսութեան կողմից
անձնապէս ոգտագործվող նորմայի վորոչ ավելացումը՝
առանց վնաս տալու հանրային արտադրութեանը, որի-
նական դոհացում կտա բարեխիղճ կոլտնտեսականի անձ
նական շահին: Այստեղ կոլտնտեսականը կարող ե աշխ-
տերի դիմաց իր ստացած հացահատիկով ու կերով
ձեռք բերել ավելի մեծ քանակութեամբ անասուն, քան
նախատեսված եր անցյալ որինակելի կանոնադրու-
թեամբ: Ահա թե ինչու նոր որինակելի կանոնադրու-
թեան մեջ հողագործական շրջաններում յուրաքանչյուր
կոլտնտեսականի տնտեսութեան կողմից անձնապէս ոգ-
տագործվող անասուններէ թվի հարցի մասին այսպէս
ե ասված:

«Հացահատիկային, բամբակացան, ցակնդեղացան,
վուշացան, կանեփացան, կարտոփիացան — բանջարաբու-
ծական, բեյարուծական ու ծխախոտագործական շրջանե-
րում յուրաքանչյուր կոլտնտեսականի տնտեսութեանը կա-
րող ե անձնական ոգտագործման համար ունենալ մի կով,
մինչև յերկու գլուխ յեղջերավոր անասունի մատղաշ, մի
մայր խոզ իր ձագերով, կամ, յեթե կոլտնտեսութեան վար-
չութիւնն անհրաժեշտ գտնի՝ յերկու մայր խոզ իրենց ձա-
գերով, մինչև 10 վոչխար ու այծ միասին, անասնապա-
հակ քանակութեամբ թռչուն ու ճագար և մինչև 20 փե-
թակ» («Որինակելի կանոնադրութեան» 5-րդ կետից):

Այլ բան է զարգացած անասնապահութիւն ունեցող հողագործական շրջաններում: Վերջինք Արեւմտյան Սիրիոյ յերկրի Բարաքինի տափաստանի շրջաններ: Դրանք հողագործական շրջաններ են: Սակայն այդտեղ և՛ բնական նպաստաւոր սլաքմանների չնորհիւ, և՛ տասնյակ տարիներով կուտակված մարդկային փորձի չնորհիւ՝ անասնապահութիւնն ևս մեծ դեր է խաղում:

Դրանք հնուց ի վեր կազմակերպվել են վորպես ապրանքային յուղագործութեան շրջաններ: Այստեղ ցանքերը բռնում են հողի մի քառորդից մինչև մի յերրորդ մասը: Խոտհարքներն ու արոտավայրերն իրենց ծավալով՝ դերազանցում են վարելահողերը: Այդպիսի շրջաններ քիչ չեն մեր յերկրում, գլխավորապես Հյուսիսում և արևելքում: Դրանց թվին են պատկանում նաև որինակ նույն այդ Արեւմտյան Սիրիոյ յերկրի Մերձ-Այտայան շրջանները, Ռմսկի մարզի Իշիմյան ու Տորոյան շրջանները և այլն: Զարգացած անասնապահութիւն ունեցող այդ հողագործական շրջանների համար որինակերի կանոնադրութիւնը, վորպես կոյտնտեսականների յանտեսութիւնների կողմից անձնապես ոգտագործվող անասունների նորմա, կովերի, խոզերի, փոխարներին ու այծերի նկատմամբ, նախատեսում է այնպիսի նորմա, վորը մոտ յերկու անգամ գերազանցում է զարգացած անասնապահութիւն չունեցող հիմնական հողագործական շրջանների նորման: Որինակելի կանոնադրութեան մեջ այսպես է ասված.

«Զարգացած անասնապահութիւն ունեցող հողագործական շրջաններում յուրաքանչյուր կոյտնտեսականի տրուտեսութիւնը կարող է անձնական ոգտագործման համար ունենալ 2-3 կով, և բացի դրանից, մատղաշներ, 2-ից մինչև 3 մայր խոզ իրենց ձագերով, 20-25 փոխար ու այծ միասին, անսահմանափակ քանակութեամբ թռչուն ու ճագար և մինչև 20 փեթակ: Այդ շրջանների թվին են պատկանում որինակ՝ Ղազախստանի քոչվորային շրջաններին և փոխահմանակից հողագործական շրջանները, Բելոռուսիայի անտառային շրջանները, Ուկրաինայի՝ Չերնիգովի ու

Կիևի մարզի անտառային շրջանները, Արեւմտյան Սիրիոյ յերկրի Բարաքինի տափաստանի շրջանները և Մերձ-Այտայան շրջանները, Ռմսկի մարզի շրջանների Իշիմի ու Տորոյսկի խմբերը, Բաշկիրիայի լեռնային մասը, Արեւելյան Սիրիոյ Արեւելյան մասը, Հեռավոր Արեւելյան յերկրի հողագործական շրջանները, Հյուսիսային յերկրի շրջանների Վոյոգդայի և Խոյմոգոյան խմբերը» («Որինակելի կանոնադրութեան» 5-րդ կետից):

Գյուղատնտեսական արտելի հին, Որինակելի կանոնադրութեան մեջ զարգացած անասնապահութիւն ունեցող հողագործական այդ շրջանները չեն լին առանձնացված վորպես հատուկ խումբ: Դա հին Որինակելի կանոնադրութեան խոշոր թերութիւնն էր, վոր այժմ լուրջված է:

Այլ է դրութիւնը կազակստանի անասնապահական շրջաններում, վորոնք սահմանակից են Բոչվոր շրջաններին, Կարմիրային տափաստանում, Հյուսիսային Կովկասյան ինքնավար հանրապետութիւնների լեռնային շրջաններում, ինչպես նաև Անդրկովկասյան դաշնակից հանրապետութիւններում, Խակասիայում և մի քանի այլ շրջաններում: Խակասիայում վարելահողերն ամբողջ հողի հազիւ մեկ վեցերորդական մասն են կազմում: Այստեղ վարելահողը մի քանի անգամ պակաս է խոտհարքերից ու արոտատեղերից: Հողագործութիւնն աննշան թփանդակ դեր է խաղում: Վճռական դերը խոտում է անասնապահութիւնը: Ահագին քանակութեամբ կոյտնտեսութիւններ ունեն կիսաքոչվոր անասնապահութիւն: Կովկասի լեռնային շրջաններում, որինակ, իրրե կանոն, կոյտնտեսութիւնները և կոյտնտեսականները ձմռանն անասուններին քշում են իրենց բնակավայրերի մոտ, իսկ գարնանից մինչև ուշ աշուն անասունների հետ միասին քոչում են Կովկասյան լեռնաշղթայի հիանալի արոտավայրերը: Այդ շրջաններում կոյտնտեսականի տնտեսութեան անձնական ոգտագործման համար կովերի ու փոխարների նորմա սահմանվում է մոտավորապես յերկու անգամ բարձր այն նորմայից, վորը սահմանված է զարգացած անաս-

նապահութիւնն ունեցող հողագործական շրջաններէ համար:

Որինակելի կանոնադրութեան մեջ ասված է այսպէս.

«Վոչ-ֆոչվոր ու կիսաֆոչվոր անասնապահութեան շրջաններում, վարտեղ հողագործութիւնը փոքր նշանակութիւն ունի, իսկ անասնապահութիւնը վնասակար դեր է խաղում տնտեսութեան մեջ, յուրաքանչյուր կոլտնտեսականի տնտեսութիւն կարող է անձնական ոգտագործման համար ունենալ 4-ից մինչև 5 կով և բացի դրանից, մատողաններ, 30-ից մինչև 40 վոչխար ու այծ՝ միասին, 2-3 մայր խոզ իրենց ձագերով, անասնաճանաչակ քանակութեամբ թռչուն, ճագար, մինչև 20 փեթակ, ինչպես և մի ձի կամ կովի տվող մի դամբիկ, կամ յերկու ուղտ, կամ յերկու եղ, կամ յերկու ջորի: Այդ շրջանների թվին են պատկանում, որինակ՝ Ղաղախտանի քոչվոր շրջաններին սահմանակից Ղաղախտանի անասնապահական շրջանները, Թուրքմենիայի, Տաջիկստանի, Ղարախալաքիայի և Կիրգիզիայի անասնապահական շրջանները, Ոյրաթիան, Խակասիան, Բուրյատ-Մոնղոլիայի արևմտյան մասը, Կալմիկներին ինքնավար մարզը, Հյուսիսային Կովկասի՝ Դաղստանի ինքնավար ՍՍՀ-ի, Չեչենո-Ինգուշիայի, Կարաբախ-Բալկարիայի, Կարաչայի և Ոսեթիայի ինքնավար մարզերի լեռնային շրջանները, ինչպես և Աբրեջանի, Հայաստանի ու Վրաստանի լեռնային շրջանները» («Որինակելի կանոնադրութեան» 5-րդ կետից):

Վերջապես վերցնենք Ղաղախտանի, Բուրիատ-Մոնղոլիայի ֆոչվոր շրջանները, Նադալայի շրջանը: Այստեղ դրութիւնը դարձյալ միանգամայն այլ է: Ղաղախտանի քոչվոր շրջաններում վարելահողը կազմում է ոգտագործվող հողի յերկու տոկոսից ել պակաս, նույնիսկ խոտհարքներն ոգտագործվող հողի միայն յերկու տոկոսն են կազմում: Հողի ճնշող մասը ծառաւորում է իբրեւ արոտատեղի: Այստեղ հողագործութիւնը համարյա վոչ մի նշանակութիւն չունի, իսկ անասնապահութիւնը տնտեսութեան համապարփակ ձևն է հանդիսանում: Կոլտնտեսականներն այստեղ ստիպված են

բոլոր պարենամթերքները՝ բացի մսից՝ դնել դրսից: Պարզ է, վոր նրանց համար չի կարելի ընդունել նույն չափանիշը, ինչ վոր հողագործական կամ նույնիսկ կիսաքոչվոր անասնապահութեան շրջանների համար: Այստեղի համար իր չափանիշն է հարկավոր, յեթե մենք ուզում ենք ուղղել այն սխալները, վոր այդ քոչվոր շրջաններում հաճախ թույլ ելին տալիս տեղական բնակները, տարվելով քոչվորներին նստակյաց կյանքի փոխադրելու ձգտումով, առանց վաղորոք հողագործական բազա և նստակյաց բնակավայր նախապատրաստելու: Այդ շրջաններում կոլտնտեսականների տնտեսութեան անհատական ոգտագործման համար կովերի կրկնակի անգամ ավելի մեծ նորմա յե սահմանվում, քան վոչ քոչվոր և կիսաքոչվոր անասնապահութեան շրջանների համար, իսկ վոչխարների ու այծերի դժով, նույնիսկ 3-4 անգամ ավելի: Այստեղ, բացի այդ, թույլատրվում է կոլտնտեսականի տնտեսութեան անձնական ոգտագործման համար ունենալ մինչև 10 ձի, 5-8 ուղտ: Քոչվոր շրջաններում ձին և ուղտն զգալի չափով քոչվորի տնային տնտեսութեան մասն են կազմում, (Ղաղախտանի չորային տափաստանների անասնաճան տարածութիւններում անընդհատ շարժվող կիրիտկան): Ահա թե ինչու Որինակելի կանոնադրութեան մեջ ասված է այսպէս.

«Քոչվոր անասնապահութեան շրջաններում, վարտեղ հողագործութիւնը համարյա վոչ մի նշանակութիւն չունի, իսկ անասնապահութիւնը հանդիսանում է տնտեսութեան համապարփակ ձևը, յուրաքանչյուր կոլտնտեսականի տնտեսութիւն կարող է անձնական ոգտագործման համար ունենալ 8-10 կով, և բացի դրանից, մատողաններ, 100-150 վոչխար և այծ միասին, անասնաճանաչակ քանակութեամբ թռչուն, մինչև 10-ը ձի, 5-8 ուղտ: Այդ շրջանների թվին են պատկանում, որինակ՝ Ղաղախտանի քոչվորական շրջանները, Նադալայի շրջանը, Բուրիատ-Մոնղոլիայի քոչվորական շրջանները» («Որինակելի կանոնադրութեան» 5-րդ կետից):

Առանձնակի՝ քուչունի և ճագարների մասին: Նոր Որինակելի կանոնադրությունն անձնական ոգտագործման համար ճագարների ու թռչունների քանակության վոչ մի սահմանափակում չի նշում, վոչ մի չըջանում: Մենք հրաժարվում ենք հաշվելու, թե կոլտնտեսուհին ինչպիսի քանակությամբ թռչուններ ու ճագարներ ե գարգացրել—թող զարգացնի ավելի շատ—այդ ոգուտ էրերի միայն պետությանը, կոլտնտեսություններին, կոլտնտեսականներին ու բանվորներին:

Նշանակում ե՝ անասնապահության զարգացման խնդիրը գյուղատնտեսական արտելի նոր Որինակելի կանոնադրության մեջ դրված ե հետեյալ կերպ՝

Որինակելի կանոնադրությունը յուրաքանչյուր արտելի պարտականությունն ե համարում կազմակերպել խառն անասնապահական ապրանքային ֆերմա, իսկ մեծ քանակությամբ անասունների առկայության դեպքում՝ մի քանի մասնագիտացված անասնապահական ապրանքային ֆերմաներ:

Որինակելի կանոնադրությունը թույլ ե տալիս այն կոլտնտեսություններում, վորտեղ կան խոշոր անասնապահական ֆերմաներ, վորտեղ կան բավական քանակությամբ հողեր, ֆերմաներին ամրացնել հատուկ հողամասեր՝ կերի կուլտուրաներ ցանելու համար: Կոլտնտեսություններում հանրային անասնապահության զարգացման հետ միասին՝ վորը Գլխավորն ե հանդիսանում, Որինակելի կանոնադրությունը մեր յերկրի գանազան չըջանների համար խիստ սահմանափակ չափերով նախատեսում ե կոլտնտեսականների տնտեսություններում անասունների անձնակա ոգտագործման նորմաներ: Յուրաքանչյուր չըջան իրեն կգտնի այդ Որինակելի կանոնադրության մեջ: Դրանումն ե գյուղատնտեսական արտելի նոր Որինակելի կանոնադրության ուժը:

3. ՁԻՆ ԿՈԼՏԵՏԵՍԱԿԱՆԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՈԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Շատ կարևոր հարց ե հանդիսանում համարյա յուրաքանչյուր արտելում հանրային ձին կոլտնտեսականի

կողմից անձնական կարիքների համար ոգտագործելու հարցը: Կոլտնտեսականների համագումարի քննարկմանը ներկայացված՝ գյուղատնտեսական արտելի Որինակելի կանոնադրության նախագիծը պարտավորեցնում եր արտելի վարչությանը, անհրաժեշտ դեպքում մի քանի ձի առանձնացնել կոլտնտեսականների անձնական կարիքների սպասարկման համար: Թվում ե թե այստեղ հարցը միանգամայն պարզ ե՝ հիվանդացավ կոլտնտեսականի ընտանիքում վորեւե մեկը, կամ թե շուկա յե հարկավոր գնուլ, դրա համար անհրաժեշտ ե ձի ստանալ վարչությունից:

Հարսանիք ե հարկավոր անել—հո չի կարելի ջահեններին ու հյուրերին ման չածել գյուղում ձիերով: Այս առաջարկի դեմ համագումարի ամբիոնից առարկություններ չեղան, բայց մասնավոր գրույցների ժամանակ պատգամավորների մեջ տաք վեճեր ելին ծագում այս հարցի շուրջը: Վոմանք ասում ելին մոտավորապես այսպես՝ թող նա (այսինքն կոլտնտեսականը), յեթե նրան ձի յե հարկավոր շուկա գնալու համար, վարձի ումնից ուղում ե, թեկուզ մենատնտեսից, ի՞նչու պետք ե յես հանրային ձին տրամադրեմ նրան ոգտագործելու: Իսկ շատերը վոչինչ չելին ասում, սակայն գործնականում նման դեպքերում այդպես են վարվում: Դա ճիշտ չե: Այդպիսի մարդկանց մենք պետք ե ուղղենք, վորպեսզի նրանք անտեղի չգրգռեն կոլտնտեսականին: Սակայն մենք պետք ե միաժամանակ հարվածենք նաև այն մարդկանց, ովքեր պատրաստ են նոր Որինակելի կանոնադրությունը հասկանալ հենց այնպես՝ թե զանգակները զնգզնգացնելով քչիր, ման ածիր հանրային ձիերով նրան, ով վոր ուղում ե և յերբ վոր ուղում ե՝ և՛ ցանքի ժամանակ, և՛ բերքահավաքի ժամանակ: Մենք այստեղ միանգամից հարվածում ենք յերկու ճակատում:

Ձիերին առանց կարիքի անտեղի ոգտագործելուց խուսափելու համար, համագումարը մի ուղղում ընդունեց, վորը լավ պարզաբանեց խնդիրը: Ուղղումը նրանում ե կայանում, վոր անձնական ոգտագործման

համար ձին տրվում է վնասով: Այդ նշանակում է, վոր յեթե կոլտնտեսականին հարկավոր է շուկա գնալ, կամ հարսանիք անել—ստացիր խնդրեմ հանրային ձին՝ անձնական ոգտագործման համար: Բայց վորպեսզի եաշիվ լինի և ձիերն անտեղի չքչեն, վորպեսզի այնպիսի դրուժյուն չստացվի, վոր վորևե մի սանձարձակ կամ նախագահի խնամի, որըմեջ ման գա հանրային ձիերով առանց կարիքի, իսկ նա, ով ավելի հասնում է, տարվա ընթացքում մի անգամ ել նույնիսկ չօգտվի ձիուց, չնայած սուր կարիքին,— Որինակելի կանոնադրությունը վճար է նախատեսում հանրային ձիերի ոգտագործման համար: Հասկանալի յե, վոր ձիերից ոգտվելու վճարը պետք է չափավոր լինի՝ կամ բնավճարով կամ դրամով, ինչպես վոր այդ ավելի հարմար է կոլտնտեսականների համար այս կամ այն շրջանում: Գյուղատնտեսական արտելի Որինակելի կանոնադրության մեջ այս հարցի վերաբերյալ ասված է այսպես.

«Արտելի վարչությունն անհրաժեշտ դեպքում հանրայնացված բանող անասուններից առանձնացնում է մի քանի ձի՝ արտելի անդամների անձնական կարիքները վճարով սպասարկելու համար» («Որինակելի կանոնադրության» 4-րդ կետից):

Ահա թե ինչպես է լուծում Որինակելի կանոնադրությունը կոլտնտեսականի հանրային ու անձնական շահի հարաբերականության հարցը՝ հանրային ձիերն անձնական կարիքների համար ոգտագործելու որինակով:

4. ԱՐՏԵԼԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՖՈՆԴԵՐԻ ՄԱՍԻՆ

Չորրորդ կարևոր հարցը, վորտեղ Որինակելի կանոնադրությունը քննում է անհատական ու անձնական շահի հարաբերականությունն արտելում, այդ կոլտնտեսության անբաժանելի ֆոնդի ոգտին ամեն տարի կատարվող հատկացումների չափի հարցն է՝ մեքենաների գնման, գյուղատնտեսական վարկի պարտքերը վճարելու, նոր կառուցումների շինանյութեր գնելու համար և այլն: Այդ հարցի շուրջն սկզբում տաք վեճ ծագեց կոլտնտեսությունների շատ նախագահների հետ: Բանն

այն է, վոր Որինակելի կանոնադրությունն անբաժանելի ֆոնդերը լրացնելու համար ամեն տարի կատարվող հատկացումների սահմանափակում է նախատեսում՝ արտելի դրամական յեկամուտների 10 տոկոսից, բայց վոչ ավելի, քան 20 տոկոսի չափով: Այս պահաս է նրանից, ինչ վոր սովորաբար այժմ կոլտնտեսություններում հատկացվում է շինարարության և մեքենաների գնման համար: Ընկ. Կորոտկովի որինակով, վորի հետ յես առիթ ունեցա՝ վիճելու համադրամարում, ամենից լավ է յերևում, թե այստեղ ինչումն է ջանք: Ընկ. Կորոտկովը մեր յերկրի լավագույն կոլտնտեսություններից մեկի նախագահն է, կոլտնտեսային արտագրութան փորձված ղեկավարը: Նրա կոլտնտեսությունն անցյալ տարի արտելի դրամական միջոցների մեծ մասն ոգտագործել է շինարարության, մեքանաներ և հովտակ գնելու համար: Իսկապես նա բացառիկ կերպով շատ է կառուցել: Սակայն հենց ինքը վոչ մի կերպ չի կարողանում հասկանալ, վոր նրա մոտ վատ է դուրս յեկել, յերբ նա արտելի դրամական յեկամուտների մեծ մասը քչել է շինարարության վրա, իսկ աշխուրի դիմաց կոլտնտեսականին վճարել է միայն 37 կոպեկ:

Մենք հասկանում ենք այդպիսի մարդկանց: Մենք նրանց սիրում ենք այն բանի համար, վոր նրանք այնպիսի մարդիկ են, վորոնք պատրաստ են իրենց ամբողջ կյանքը նվիրելու հանուն հանրային տնտեսության շահերի: Այդպիսի մարդիկ առաջ են մղում հանրային գործը: Սակայն առավել ևս մեմ պարտավոր եմք նախագգուշացնել այդ մարդկանց՝ մի շեղվե՛ք, մի վազե՛ք առաջ, հանրային շահը համակցեցե՛ք կոլտնտեսականների անձնական շահի հետ: Որինակելի կանոնադրությունը բոլոր կոլտնտեսություններին ասաց՝ հանրային շինարարության գործում մենք ձեզ սահմանափակում ենք դրամական յեկամուտների 20 տոկոսով: Մենք այդ բանն անում ենք նրա համար, վորովհետև ուզում ենք կառուցել և՛ ախոռներ, և՛ ակումբներ, և՛ գոմեր (միայն թե պարտադիր չե քոլորը կառուցել մեկ տարում), բայց և ապահովել կոլտնտե-

աականի համա վոչ միայն նատուրալ, այլև դրամական հարաճուն յեկամուտ: Իսկ յեթե դուք, թանգագին նախագահներ, ուզում եք ավելին կառուցել՝ կառուցեցեք, այդ ճանապարհը ձեր առաջ փակված չե: Հասեք այն բանին, վոր դրամական յեկամուտն արտելում ավելի լինի, զարգացրե՛ք տնտեսության ոժտնդակ ճյուղեր, ավելի շատ ապրանքներ արտադրեցե՛ք, ավելի շատ վաճառեցե՛ք այդ ապրանքներից: Այն ժամանակ արտելի դրամական յեկամուտների 10-20 տոկոսն արդեն քիչ չի լինի: Այն ժամանակ փողը կրավականացնի՝ ախտոներ կառուցելու համար, և՛ աշխուրհի դիմաց վճարելու համար:

Ահա թե ինչու գյուղատնտեսական արտելի Որինապելի կանոնադրությունն ասում է, թե ստացվող յեկամուտներից արտելը՝

«Լրացում է արտելի անրաժանելի Փոնդը՝ գյուղատնտեսական գործիքներ և անասուններ գնելու, շինանյութերի արժեքը վճարելու և դրսից շինարարությանը ներգրավվող բանվորների հետ հաշիվ տեսնելու համար, գյուղատնտեսական բանկին յերկարատե վարկերի հերթական վճարներ մուծելու համար, ընդ վորում հոգուտ անրաժանելի Փոնդի հատկացումներ ու լրացումներ են կատարվում արտելի դրամական յեկամուտների 10 տոկոսից մինչև վոչ ավելի, քան 20 տոկոսի չափով» (Որինակելի կանոնադրության» 12-րդ կետի «յե» յենթակետը):

Այսպիսով անրաժանելի Փոնդերին կատարվող հատկացումների հարցում ևս, Որինակելի կանոնադրությունը հանրային ու անձնական չահերը համալցում է այնպես, վոր ամբողջովին ապահովվի հանրային չահը, բայց վորպեսզի դրա հետ միասին, այդ ավելորդ ու անտեղի վեճեր չստեղծի կոլտնտեսականների հետ, տեղիք չտա կոլտնտեսականների անտեղի և վոչվորի պետք չեկող դժգոհության:

Յեղրափակելով գեկուցման այս մասը, յես պիտք է ավելացնեմ ահա թե ինչ՝ ինչո՞ւ մենք կարողացանք 1935 թվականին ընդառաջել կոլտնտեսականի տնտեսու-

թյան անձնական ոգտագործման համար յեղած անասունների քանակությունը վորոչ չափով ավելացնելուն:

Այս հարցի պատասխանը միանգամայն պարզ է: Մենք կարողացանք այդ բանին ընդառաջել հենց նրա համար, վոր ամրացել է կոլտնտեսային արտադրության հանրային հիմքը, ամրացել է կոլտնտեսային հանրային սեփականությունը: Յեթե մենք 1930 թվականին կոլտնտեսականի տնտեսության համար սահմանելինք անձնական ոգտագործման համար անասունների այնպիսի նորմա, վորն որինակելի կանոնադրությունը նշում է այժմ, մենք կկործանելինք կոլտնտեսությունները՝ շատ քչերը դուրս կգային հանրային աշխատանքի: Այլ բան է այժմ: Կոլտնտեսություններն ամրացել են, վորքի յենեկանգնել, չնչերի թվին համապատասխան յեկամուտների բաշխումից նրանք անցել են յեկամուտներն րստ աշխուրհի բաշխելուն: Կոլտնտեսականների հիմնական մասսան հասկացել է, վոր հետ՝ դեպի անհատական տնտեսությունը, ճանապարհ չկա: Առաջավոր կոլտնտեսականների ոգնությամբ մեմք կոլտնտեսային սեփականությունը պաշտպանեցինք 1932 թվականի կուլակային հարձակումից: Միլիոնավոր կոլտնտեսականներ իրենց կյանքի որինակով հասկացան, վոր խոչոր հանրային տնտեսությունը՝ ազնվորեն աշխատելու դեպքում՝ ավելի շատ յեկամուտներ է տալիս, քան անհատականը: Միլիոնավոր կոլտնտեսականների գիտակցության մեջ արմատացավ այն հասկացողությունը, վոր հանրային սեփականությունը սրբազան է ու անձեռնմխելի:

Ահա թե ինչու, հենց այժմ հնարավոր դարձավ կոլտնտեսականների տնտեսության անձնական ոգտագործման յենթակա անասունների քանակի վորոչ աճում թույլ տալը, սակայն խստորեն սահմանափակված սահմաններում՝ նայած զանազան շրջանների պայմաններին:

Վերջապես, ևս մեկ գործնական հարց: Որինակելի կանոնադրությունը յուրաքանչյուր կոլտնտեսականի տնտեսությանն իրավունք տվեց անձնական ոգտագործման համար ունենալ անասունների վորոչ քանակու-

թյուն՝ ամեն մի կոլտնտեսական կարող է հաշվել, թե
վորքան հացահատիկ է հարկավոր դրա համար: Իսկ
վերաբերյալ վերցնել այդ հացահատիկը: Անասունները
կերակրման համար միայն մեկ յուրջ աղբյուր կա՝
հանրային-տրտելային տնտեսությունը: Որինակելի
կանոնադրությունը կոլտնտեսականին ասում է. «Դու
ուզում ես ունենալ խոզ՝ իր խոճկորներով, կանոնա-
դրությունը քեզ ընդառաջում է՝ զարգացրու: Սակայն
նախապես հաշվի առ, վոր այդ բանին դու կհասնես այն
գեպքում, միայն, յեթե ամրացնես հանրային տնտեսու-
թյունը, յեթե վաստակես, որինակ, վոչ թե յերկու
հարյուր աշխո՞ր՝ ինչպես անցյալ տարի, այլ 300, յեթե
աշխո՞րին ստանաս վոչ թե 3-5 կիլոգրամ հացահատիկ՝
ինչպես անցյալ տարի, այլ 8-10 կիլոգրամ»:

Այս բանը պետք է ականջի ող դարձնեն այն բոլոր
մարդիկ, ովքեր կոլտնտեսությունում վաստակում են
աշխո՞րին 3-5 կիլոգրամ հացահատիկ և դրանից հետո
թմրկահարելով հպարտ չըջում են ամբողջ շրջանում,
աղաղակելով՝ մենք հաղթանակեցինք, մենք ունենք
աշխո՞րին 3 կիլոգրամ: Նրանք չեն մտածում այն մասին,
վոր յերեք կիլոգրամը բավական է մարդկանց կերակրե-
լու համար, սակայն չի բավականացնի խոզեր ու թըռ-
չուններ կերակրելու համար:

Նշանակում է՝ վոր կողմից ել թեկուզ մոտենալու
լինենք կոլտնտեսային գործին, կոլտնտեսականի հասա-
րակական կամ մասնավոր չահին վերաբերող ինչպիսի
հարց ել թեկուզ քննարկելու լինենք, նախ և առաջ հար-
կավոր է հիշել հանրային տնտեսության մասին, նախ և
առաջ հարկավոր է ամրացնել հանրային սեփականու-
թյունը, սրբությամբ պահպանել այն, ազնվորեն աշ-
խատել—այստեղ է կոլտնտեսականի ունևոր և կուլ-
տուրական կյանքի արմատը, այստեղ է նրա բարեկե-
ցության աղբյուրը:

1. ԱՆԳԻՏԱԿԻՑՆԵՐԻՆ ԴԱՐՁՆԵԼ ԳԻՏԱԿԻՑ

Կան անգիտակից կոլտնտեսականներ: Նրանց մեջ
գեռես ամուր կերպով նստած է յերեկվա մենատնտեսը:
Նրանք անհոգ են աշխատանքի մեջ: Նրանք չեն կատա-
րում արտադրանքի նորմաները: Բրիգադիրի առաջին
խիսկ անուշադրության դեպքում, նրանք պատրաստ են
պարապ անցկացնել բանվորական ուրը: Ի՞նչպես վարվել
դրանց հետ: Հաճախ այդպիսի մարդկանց միանգամից
դուրս են գցում կոլտնտեսությունից: Փաստ է այն, վոր
վերջին յերկու տարվա ընթացքում կոլտնտեսություն-
ներից վտարված է հարյուր հազարավոր կոլտնտեսա-
կաններ: Նրանց մի մասը կոլտնտեսությունների անուղ-
ղելի թշնամիներ են, սակայն մի մասն ել անգիտակից
մարդիկ, վորոնք գեռես սովոր չեն հանրային աշխատան-
քին: Ճիշտ կլինի արդյոք, յեթե այդ անգիտակիցներին
մենք միանգամից դուրս գցենք կոլտնտեսություննե-
րից, առանց փորձելու ուղղել նրանց: Իհարկե, սխալ է:

Զինովնիկի տեսակետից թերագիտակցին կոլտնտե-
սությունից միանգամից դուրս գցելն ավելի հեշտ է,
քան նրան ուղղելը: Սակայն մենք չենք կարող յեղնել
չինովնիկական հարմարության չահերից:

Մենք պարտավոր ենք հիշեցնել այն՝ կոլտնտեսու-
թյան լավ նախադասներից շատերին, վորոնք թերագի-
տակից կոլտնտեսականի նկատմամբ մեկ միջոց գիտեն՝
վտարում: Մենք պետք է հիշեցնենք նրանց, վոր նրանք
իրենք ել դեռ մի 4-5 տարի առաջ մենատնտեսներ է-
յին: Վոր 4-5 տարվա ընթացքում կոլտնտեսային կար-
գը նրանց դարձրեց կոլտնտեսային գործի համար պայ-
քարող առաջավոր մարտիկներ: Յեթե բանվորա-գյու-
ղացիական պետությունը 4-5 տարի առաջ ներկայիս

առաջավոր կոլտնտեսականներին անհուսալի մարդիկ համարեք, մենք այժմ վոչ մի կոլտնտեսություն չեյինք ունենա: Նշանակում է կոլտնտեսություններում յեղած այժմյան առաջավորները նույնպես պետք է ավելի մեծ համբերատարություն ցուցաբերեն անգիտակիցների նկատմամբ, փորձեն ուղղել նրանց, ներշնչել նրանց՝ թե ինչպես է հարկավոր աշխատել կոլտնտեսության մեջ. իսկ յեթե բան դուրս չեկավ,—անցնել պատժի միջոցների և միայն անհուսալիներին ու անուղղելիներին վտարել:

Դեռևս միլիոնավոր թերագիտակից կոլտնտեսականներից մենք կկարողանանք ստեղծել ու կստեղծենք սոցիալիստական հասարակության գիտակից մասնակիցներ, յեթե աշխատենք լենինորեն, ստալինորեն: Հարկավոր է միայն հասկանալ, վոր այդ չի կարելի անել միանգամից: Անհատական տնտեսությունը գոյություն է ունեցել հազարավոր տարիներ: Կոլտնտեսությունների ճնշող մեծամասնությունը գոյություն ունի միայն 5 տարի: Ի՞նչպես կարելի չէ հապա մտածել, թե ներկայիս բոլոր կոլտնտեսականներն արդեն դարձել են սոցիալիստական հասարակության գիտակից մասնակիցներ: Պարզ է, վոր հարկավոր կլինի դեռևս շատ տարիներ աշխատել, վորպեսզի վերադաստիարակենք մարդկանց: Իսկ յեթե այստեղ գործենք միայն կոլտնտեսությունից վտարելու յեղանակով, միայն գործը կփչացնենք:

Ահա ներշնչման ու ուղղման և վերջապես տույժի ու պատժի ինչպիսի միջոցներ է առաջարկում կիրառել գյուղատնտեսական արտելի Որինակելի կանոնադրությունն այն կոլտնտեսականների նկատմամբ, վորոնք դեռևս թերագիտակից են.

«Հանրային գույքին անտնտեսորեն ու անսրտացավ վերաբերվելու համար, առանց հարգելի պատճառների աշխատանքի դուրս չգալու, վատորակ աշխատանքի և աշխատանքային կարգապահության ու կանոնադրության այլ խախտումներ կատարելու համար, վարչությունը մեղավորներին տույժի յե յենթարկում ներքին կարգի կանոնների հա-

մաճայն: Դրինակ, կրկին կատարել տալ վատորակ կատարված աշխատանքը՝ առանց աշխորերը հաշվելու, նախազգուշացում, հանդիմանություն անել, պարսավանքի յենթարկել ընդհանուր ժողովում, բարձրացնել սև տախտակի, տուգանել մինչև հինգ աշխորի չափով, փոխադրել ցածր աշխատանքի, ժամանակավորապես հեռացնել աշխատանքից» («Որինակելի կանոնադրության» 17-րդ կետից):

2. ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԻՑ ՎՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սակայն կգտնվեն այնպիսի կոլտնտեսականներ, վորոնք անուղղելի դուրս կգան: Կգտնվեն այնպիսի կոլտնտեսականներ, վորոնց չեն ուղղի վո՛չ պարսավանքի հասարակական միջոցները, վո՛չ դատապարտումն արտելի բոլոր ազնիվ անդամների կողմից, վո՛չ տուգանքը, վո՛չ ավելի ցածր պաշտոնի փոխադրելը: Այդպիսի անուղղելիներին հարկ կլինի հեռացնել արտելի կազմից: Այդ մասին գյուղատնտեսական արտելի Որինակելի կանոնադրության մեջ ասված է այսպես.

«Այն դեպքերում, յերբ դաստիարակելու և պատժելու համար արտելի ձեռք առած բոլոր միջոցները չեն ներգործում, վարչությունն ընդհանուր ժողովում դնում է արտելի անուղղելի անդամներին արտելից վտարելու հարցը» («Որինակելի կանոնադրության» 17-րդ կետից):

Յեթե, սակայն, Որինակելի կանոնադրությունը սահմանափակվեր միայն դրանով, և չսահմաներ, թե ինչ կարգով պետք է կատարել վտարումը կոլտնտեսություններից, ապա նա գործի կեսը միայն արած կլիներ: Այնտեղ, ուր խոսքը վերաբերում է հարյուր հազարավոր կենդանի մարդկանց ճակատադրին, դեռ քիչ է ընդհանուր կանոններ սահմանելը, թե՛ նախ՝ հասկացրու, ապա—պատժիր, և այնուհետև միայն, յեթե այս ամեն չի ոգնի—վտարիր: Պետք է մանրամասն նախատեսել բոլոր կանոնները, թե ինչպես կատարել հեռացումը, վորպեսզի չարարկումներ թույլ չտրվեն: Յես հարվածային կոլտնտեսականների համազումարում օրինակ բերեցի այն մասին, թե ինչպես «Չերվոնա-

Քերեղինա» կոլտնտեսությունում հեռացրել են կոլտնտեսությունից Իվան Շպակին՝ նախագահին քննադատելու համար, և միևնույն ժամանակ արձանագրության մեջ ել դեռ գրել են. «հեռացնել նրան անբարեխիղճ աշխատանքի համար, այս կամ այն անձնավորությանը վարկաբեկելու նպատակով ամեն տեսակի գրպարտություններ սարքելու համար»: Տեսնում եք, ինչպիսի դեպքեր են լինում: Մեր յերկիրը մեծ է և հետամնացությունը դեռևս քիչ չէ: Հաճախ լինում է և այսպես՝ կոլտնտեսության նախագահը վորոշեց «վտարել» և վերջացավ, գյուղխորհուրդը վորոշեց—«վտարել կոլտնտեսությունից»—և վերջացավ, չըջկոմբ վորոշեց՝ «վտարել կոլտնտեսությունից»— և վերջացավ:

Մենք ունենք 240 հազար կոլտնտեսություն, կոլտնտեսություններում զանազան մարդիկ են լինում: Նշանակում է հարկավոր են խիստ կանոններ: Վորպեսզի մարդիկ մեզանում պետական կարևորություն ունենալով հասարակական գործը չհամարեն իրենց տնային գործը, ահա թե կոլտնտեսությունից հեռացնելու ինչպիսի կարգ է սահմանում գյուղատնտեսական արտելի Որինակելի կանոնադրությունը:

Արտելի կազմից վտարել կարող է միայն արտելի անդամների ընդհանուր ժողովը: Արտելի կազմից վտարել ինչպիսի այլ մարմնի կողմից ել լինի՝ լինի այդ կոլտնտեսության վարչություն, լինի այդ գյուղխորհուրդ, չըջկոմբ, չըջկոմբ կամ յերկրային լիազոր, չի թույլատրվում:

Յեթե վորևե այլ մարմին, բացի արտելի անդամների ընդհանուր ժողովից, վտարի վորևե մեկին արտելից, ապա այդ մարմնի ղեկավարները մեղավոր կլինեն իշխանազանցության համար, ԽՍՀ Միության ուրենքները խախտելու համար:

Սակայն այդ քիչ է: Յենթադրենք մի մարդու մասին արձանագրության մեջ գրված է, թե նրան հեռացրել է «ընդհանուր ժողովը», իսկ գործնականում քանից դուրս է գալիս, վոր նրա հեռացմանը մասնակ-

ցել է հաղիվ թե արտելի անդամների մեկ տասերորդ մասը: Այդ նույնպես բանի պետք չէ: Մարդկանց մեջ, վորոնք ամբողջ կյանքի ընթացքում ապրում են իրար կողքի, անձնական հաշիվներ կլինեն ինչքան ցանկանաք: Ահա թե ինչու, Որինակելի կանոնադրությունը պահանջում է, վորպեսզի այն ընդհանուր ժողովում, վորը վորոշում է ընդունում կոլտնտեսությունից հեռացնելու մասին, ներկա լինի արտելի անդամների վոչ պակաս քան յերկու յերրորդ մասը:

Մեզանում հեղափոխության առաջին տարիներին մի լավ սովորություն կար. յուրաքանչյուր ժողովի արձանագրության մեջ գրանցվում էր, թե քանի մարդ է ներկա և քանի մարդ է ընդունել բանաձևը. վատ չեր լինի, յեթե մենք վերականգնեյինք այդ սովորությունը:

Յերբեմն արձանագրության մեջ գրում են, թե ժողովին ներկա յե յեղել անդամների յերկու յերրորդ մասը, իսկ թե իրոք քանի մարդ է ներկա յեղել, արձանագրության մեջ չեն նշում: Ինչպե՞ս ստուգել այս դեպքում—ներկա՞ յե յեղել իրոք յերկու յերրորդը, թե՞ այդ թվացել է միայն ժողովի քարտուղարին: Գյուղատնտեսական արտելի Որինակելի կանոնադրությունը նախատեսում է, վոր վտարման վերաբերյալ ակտի մեջ պետք է ճշտիվ մատնանշված լինի թե քանի կոլտնտեսական է ներկա յեղել ժողովին:

Այդ ել դեռ քիչ է: Կարող է պատահել և այսպես՝ ժողովի սկզբում ներկա յե յեղել իսկապես յերկու յերրորդ մասը, իսկ հեռացման վերաբերյալ հարցը նախագահը հետաձգել է մինչև ժողովի վերջը, յերբ արդեն մնացել է անդամների քառորդ մասը: Վորպեսզի այդպիսի բան տեղի չունենա, գյուղատնտեսական արտելի Որինակելի կանոնադրությունը պահանջում է վտարման վերաբերյալ վորոշման մեջ նշել ֆվեարկոյների ճիշտ թիվը:

Որինակելի կանոնադրությունը վտարվածի համար իրավունք է նախատեսում՝ արտելից իրեն հեռացնելու համար բողոքարկել խորհուրդների չըջանային

դործադիր կոմիտեյին, վորը վերջնականապես լուծում է հարցը: Երջգործկոմների վորոշ նախագահներ մի փոքր վերավորված են այդ վորոշումով՝ դե նրանք զբաղվում են պետական կարևոր գործերով, հաստատում են կոլտնտեսությունների ցանքի պլանը, վերացնում են ճեղքվածքները և հանկարծ ժողկոմխորհի և Համ. Կ (բ) Կ կենտկոմի կողմից հաստատված կոլտնտեսային կանոնադրությունը պահանջում է շրջգործկոմի նախագահությունից՝ քննության առնել կոլտնտեսությունից հեռացնելու վերաբերյալ ամեն մի բողոք, այն ել վո՛չ թե թղթի վրա, վո՛չ թե շրջհոգրաժնի աշխատողի միջոցով, այլ, վոր ինքն անմիջականորեն զբաղվի այդ հարցով՝ արտելի նախագահի և բողոքատվի ներկայությամբ:

Իհարկե, այս գլխացավանք գործ է շատ շրջգործկոմների համար: Սակայն միևնույն ժամանակ դա բացառիկ կարևոր գործ է: Չե՞ վոր հարցը վերաբերում է մարդու ճակատագրին: Բացի այդ, մանրագնին քրննության առնելով, թե այս կամ այն մարդն ինչո՞ւ չէ հեռացված արտելից, յերբեմն շրջգործկոմի նախագահությունը կկարողանա արտելի իսկական դրության մասին ճշմարտությունն իմանալ, հինգ որվա ընթացքում և վոչ թե մեկ ամսից հետո՝ ճեղքվածք առաջ գալուց հետո, ինչպես այդ շատ հաճախ է պատահում:

Ահա թե ինչու այն հարցի վերաբերյալ, թե ինչպե՞ս կատարել վտարումը կոլտնտեսություններից, գյուղատնտեսական արտելի Որինակելի կանոնադրության մեջ ասված է այսպես.

«Անդամների վտարումն արտելից կարող է կատարվել միմիայն արտելի անդամների ընդհանուր ժողովի վորոշմամբ, վորին ներկա չեն արտելի անդամների ընդհանուր թվի առնվազն յերկու յերրորդ մասը: Արտելի անդամների ընդհանուր ժողովի արձանագրության մեջ անպայման մատնանշվում է ժողովին ներկա գտնվող կոլտնտեսականների թիվը և վտարելու համար քվե տվողների թիվը:

«Այն դեպքում, յերբ արտելի անդամը խորհուրդներին շրջանային գործադիր կոմիտեյին բողոքում է իր վտար-

ման դեմ, հարցը վերջնականապես լուծում է խորհուրդներին շրջանային գործադիր կոմիտեյի նախագահությունը՝ արտելի վարչության նախագահի և բողոքատվի ներկայությամբ» («Որինակելի կանոնադրության» 8-րդ կետից):

Այս ամենը չի նշանակում, թե պետք է ներողատրեն վերաբերվել գողին, վորը հափշտակում է կոլտնտեսային սեփականությունը, չարագործին՝ վորը վնասարարություն է անում կոլտնտեսության նկատմամբ:

Այլ բան է անգիտակցի, կամ քերագիտակցի վերադաստիարակումը. այստեղ Լենինը միշտ պահանջել է և Ստալինն անչեղորեն պահանջում է դեկավարներից՝ համբերություն, փորձվածություն և համոզելու մեթոդների լայն գործադրում:

Այլ բան է չարագործը, վորը յերկաթի կտոր է գցել կալսիչի մեջ կամ փչացրել է ձիուն: Ժողովրդի այդպիսի թշնամիների նկատմամբ, Լենինը միշտ պահանջում էր ինչպես և ընկ. Ստալինը պահանջում է ինչպես կուսակցական, այնպես և անկուսակցական դեկավարներից՝ մեծագույն զգոնություն և դաժանություն:

Այստեղ խոսք կարող է լինել միմիայն հանրային սեփականության պահպանման վերաբերյալ որենքի ամբողջ խստությամբ պատժելու մասին:

Դրա համար ել գյուղատնտեսական արտելի Որինակելի կանոնադրության մեջ նախատեսված է հետևյալ կետը.

«Հանրային կոլտնտեսային և պետական սեփականության ամեն մի հափշտակում, դեպի արտելի գույքն ու ամեն մի վնասարար վերաբերմունք արտելը դիտում է վորպես դավաճանություն՝ կոլտնտեսության ընդհանուր գործին և ողնություն ժողովրդի թշնամիներին:

Կոլտնտեսային կարգերի հիմունքներն այդպես հանցավոր կերպով խախտելու համար մեղավոր անձինք արտելի կողմից դատի յեն տրվում բանվորա-գյուղացիական պետության որենքների ամբողջ խստությամբ նրանց պատժելու համար» («Որինակելի կանոնադրության» 18-րդ կետ):

3. ԻՆՉՊԵՍ ՎԱՐՎԵԼ ՄԵՆԱՏՆՏԵՍՆԵՐԻ ՀԵՏ

Գյուղատնտեսության մեջ մենատնտեսներ ղեռնաքիչ չեն մնացել: Նրանց թիվը չորս միլիոն տնտեսությունից պակաս չէ: Նշանակում է մոտ 20 միլիոն գյուղացիական բնակչություն ղեռնա չի մտել կոլտնտեսություն:

Ինչպե՞ս վարվել դրանց հետ: Կոլտնտեսությունները չափազանց տհաճություններ են ընդունում նրանց իրենց կազմի մեջ այդ բոլորին հայտնի յե: Սակայն վոչ մի կերպ չի կարելի յենթադրել, վոր այդ բոլոր միլիոնավոր մարդիկ կորած են սոցիալիստական աշխատանքի համար: Նրանց մեջ քիչ չեն այնպիսիները, վորոնք ազնիվ աշխատողներ կդառնան խորհրդային կոլտնտեսություններում և գործարաններում: Նրանց փոքր մասը չե, վոր կզնա դեպի կոլտնտեսությունները:

Կարո՞ղ ենք մենք արդյոք հաշտվել այն բանի հետ, վոր վորոշ կոլտնտեսություններ փակում են դռները նրանց առաջ: Չենք կարող: Բոլորը դեռ հիշում են, թե կոլտնտեսային առաջին համադրումարում ընկ. Ստալինն ինչպիսի պարզություններ դեմ արտահայտվեց այն բանին, վոր առանց ընտրության բոլոր մենատնտեսների առաջ փակվեն կոլտնտեսության դռները: Ծառ հաճախ կոլտնտեսություն ընդունվելու ժամանակ մենատնտեսից պահանջում են, վոր նա միանգամից վճարի այն ձիու արժեքը, վորը նա մի յերկու տարի առաջ փչացրել է և մտցնի սերմացուն ամբողջովին: Իսկ այդ նրա ուժերից վեր է: Այստեղ արդեն «որինական» հիմունքներով մերժում են մենատնտեսին ընդունել: Լավ կլինի, յեթե այդպիսի «որինական» հիմունքներ ավելի քիչ լինեն:

Որինակելի կանոնադրությունը նախատեսում է, վոր կոլտնտեսությունները պարտավոր են ազնիվ մենատնտեսի նկատմամբ վորոշ ներդրամություն ցուցաբերել՝ նրա կոլտնտեսություն մտնելու ժամանակ: Ահա թե այդ առթիվ ի՞նչ է գրված գյուղատնտեսական արտելի Որինակելի կանոնադրության մեջ.

«Այն մենատնտես գյուղացիները, վորոնք արտել մշտնելուց առաջ յերկու տարվա ընթացքում վաճառել են իրենց ձիերը և սերմացու չունեն, արտել են ընդունվում այն պայմանով, վոր պարտավորվեն իրենց յեկամուտներից մինչև վեց տարի ժամանակամիջոցում մաս-մաս մուծել ձիու արժեքը և սերմացուն՝ բնամթերքով» («Որինակելի կանոնադրություն» 7-րդ կետից):

Ազնիվ մենատնտեսներին կոլտնտեսություն մտնելու գործում ոգնելը հատկապես կարևոր է հենց այժմ: Չե՞ վոր 1935 թվականին կոլտնտեսություններին տրվելու յեն հողն ընդմիշտ ոգտագործելու ակտեր, իսկ մենատնտեսներից մի քանիսի հողերը հաճախ չփոթում են կոլտնտեսությունների հողագտագործման սահմանները:

Մի քանի խոսք նախկին կուլակներին ու ձայնագուրկների յերեխաներին կոլտնտեսություններն ընդունելու հնարավորության մասին: 1930 թվականի հին Որինակելի կանոնադրությունն այս հարցին մեկ պատասխան եր տալիս՝ վո՛չ նախկին կուլակներին, վո՛չ ձայնագուրկների յերեխաներին կոլտնտեսություն ընդունել չի կարելի: Յեվ այդ միանգամայն ճիշտ եր:

Յեթե մենք այս կարգը չնախատեսեյինք 1930 թվականի Որինակելի կանոնադրության մեջ, կուլակները կարգին կդժվարացնեյին կոլտնտեսությունների ամրացումը: Կոլտնտեսություն սողոսկած կուլակներն ու յենթակուլակները դեռ 1932 թվականին փորձում եյին պայթեցնել կոլտնտեսությունները ներսից: Մենք հարված հասցրինք նրանց բուլչեիկորեն, մենք կոլտնտեսություններից դուրս վնդեցինք և դաժանորեն պատժեցինք վնասելու համար կոլտնտեսությունները սողոսկած շատ կուլակների:

Այժմ, յերբ կոլտնտեսություններն ամրացել են, Որինակելի կանոնադրությունն ասում է կոլտնտեսություններին՝ նախկին կուլակների մեջ՝ ինչպես ցույց է տալիս Բելոմորստրոյի փորձը՝ կա մարդկանց վորոշ մաս, վորն ուղղվել է և ուղղում է ազնվորեն աշխատել կոլտնտեսության մեջ: Ձայնագուրկների յերեխաների

մեջ քիչ չեն այնպիսիները, վորոնք արդեն մի շարք տարիների ընթացքում բարեխիղճ կերպով աշխատում են հանրագումար աշխատանքում: Այդպիսի մարդկանց, իհարկե, ուսումնասիրելով և խստորեն ստուգելով՝ վորպեսզի ուղղվածների անվան տակ չսողոսկեն գառան մորթի հագած գայլերը, Որինակելի կանոնադրությունը թույլ ե տալիս ընդունել արտելի անդամների կազմի մեջ: Ահա թե այս հարցի մասին ի՞նչ ե ասված գյուղատնտեսական արտելի Որինակելի կանոնադրության մեջ.

«Արտելի մեջ չեն ընդունվում կուլակները և ընտրական երաժուկներից զրկված բոլոր անձինք:

Ծանոթութուն.— Այս կանոնից թույլատրվում ե բացառություն անել.—

ա) Ձայնադուրկների այն զավակների վերաբերմամբ, վորոնք մի շարք տարիների ընթացքում զբաղված են հանրագումար աշխատանքով և աշխատում են բարեխիղճորեն:

բ) Նախկին այն կուլակների և նրանց ընտանիքի անդամների վերաբերմամբ, վորոնք արտաքսված լինելով հակախորհրդային և հակակոլտնտեսային յեղույթների համար, իրենց նոր բնակավայրում յերեք տարվա ընթացքում լիենց ազնիվ աշխատանքով և խորհրդային իշխանության ձեռնարկումներին ոժանդակելով, ցույց են տվել, վոր իրոք ուղղվել են» («Որին. կանոնադրության» 7-րդ կետից):

4. ՄՇՏԱԿԱՆ ԲՐԻԳԱԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սրանից դուք տեսնում եք, վոր Որինակելի կանոնադրության կարևորագույն խնդիրներից մեկն ե հանդիսանում՝ ապահովել կոլտնտեսության անձնական կազմի կայունությունը, վերջ դնել հոսունություն վերջին մնացորդներին և միաժամանակ կոլտնտեսություն մտցնել ու վերադաստիարակել դեռևս մնացած աշխատավոր մենատնտեսներին: Կոլտնտեսության մեջ անձնական կազմի կայունությունն ապահովելը դեռ յերեք ամենը չե:

Այնպես ե պատահում, վոր կոլտնտեսության մեջ արդեն յերկու-յերեք տարի յե ինչ ստեղծվել ե հիմնա-

կան կազմը: Բայց, այնուամենայնիվ, գործն առաջ չի գնում: Այդ ավելի հաճախ լինում ե այնպիսի կոլտնտեսություններում, վորտեղ կոլտնտեսականը չգիտի իր տեղը կոլտնտեսային արտադրության մեջ, վորտեղ չկան բրիգադներ:

Հայտնի յե, վոր 1930 թվականի հին Որինակելի կանոնադրության մեջ, «բրիգադ» բառը նույնիսկ չեք ել հիշատակվում: Այդ հասկանալի յե: Այն ժամանակ, 1930 թվականին գյուղատնտեսական արտելի Որինակելի կանոնադրությունը դիմում եր մենատնտես գյուղացիներին և ասում նրանց՝ «Համախմբվեցե՛ք միասին աշխատելու համար, միասին աշխատանքը, հանրային խոշոր տնտեսության մեջ ավելի ձեռնտու յե, քան միայնակ աշխատանքը մանր տնտեսության մեջ»: Ինչպե՞ս կառուցել աշխատանքը կոլտնտեսության մեջ, վորպեսզի դիմագրկություն չլինի, այդ բանը դեռ վոչ վոք չգիտեք: Փորձ չկար և Որինակելի կանոնադրության մեջ այդ մասին վոչինչ չեք գրված:

Ներկայումս արդեն դրանով սահմանափակվել չի կարելի: Ներկայումս այն կոլտնտեսությունը, վորտեղ մարդիկ աշխատում են առանց բրիգադների բաշխվելու, վորտեղ կոլտնտեսականը չգիտի իր մշտական տեղը կոլտնտեսային արտադրության մեջ, դա արդեն հետամնացներից հետամնաց կոլտնտեսությունն ե:

Դրա համար ել Որինակելի կանոնադրությունը կուլտնտեսություններին ասում ե՝ միասին կատարվող աշխատանքի, հանրային արտադրության վողջ շահավետությունը քաղելու համար հարկավոր ե ամբողջ կոլտնտեսությունը բաշխել բրիգադների (դաշտավարական և անասնապահական): Յուրաքանչյուր կոլտնտեսական պետք ե գիտենա, թե վոր դաշտավարական, կամ անասնապահական բրիգադի անդամ ե ինքը, վոր հողամասի վրա, կամ վոր գոմում ե աշխատում նրա բրիգադը:

Վորպեսզի գործերը կոլտնտեսության մեջ առաջ գնան, յուրաքանչյուր կոլտնտեսական պետք ե գիտենա, վոր ինքն ինչպե՞ս մեկ տարի հետո, այնպես և յեր-

կու տարուց հետո աշխատելու յե միևնույն բրիգադային հողամասերի վրա, վորի վրա աշխատում ե այս տարի: Հարկավոր ե, վոր յուրաքանչյուր կոլտնտեսական գիտենա, վոր այն մոլախոտը, վորն այս տարի չի քաղհանի նրա բրիգադը, յեկող տարի կխեղդի հացահատիկը, իր իսկ բրիգադի հողամասում:

Վորպեսզի կոլտնտեսության գործերը առաջ գնան, հարկավոր ե, վոր յուրաքանչյուր կոլտնտեսական գիտենա, վոր յեթե իր բրիգադը նրան հանձնված կովերը բեղմնավորի վոչ թե ցեղական, այլ հասարակ ցուլերի միջոցով, ապա նույնիսկ չորս-հինգ տարուց հետո ել բրիգադի անդամները վնաս կկրեն, կովերն ավելի քիչ կաթ կտան, և բրիգադն ավելի պակաս յեկամուտ կըստանա:

Ինչպես տեսնում եք, կոլտնտեսությունն ամրացնելու և նրա անդամների կազմի կայունությունը պահպանելու համար, կոլտնտեսության մեջ բրիգադ կազմակերպելը չափազանց խոշոր նշանակություն ունի:

Որինակելի կանոնադրությունն այն մասին, թե ինչպես կազմակերպել և ամրացնել արտելի անդամներին աշխատանքի մեջ, ասում ե հետևյալը.

«Վարչությունն արտելի անդամներից ստեղծում ե արտադրական բրիգադներ:

Դաշտավարական բրիգադներ են կազմվում առնվազն լիակատար ցանքաշրջանառության ժամանակի համար: Դաշտավարական բրիգադին հողամասեր են հատկացվում ցանքաշրջանառության դաշտերում ցանքաշրջանառության ժամանակաշրջանի համար: Դաշտավարական յուրաքանչյուր բրիգադին կոլտնտեսության վարչությունը հատուկ արձանագրությամբ ամրացնում ե նրան անհրաժեշտ ամբողջ ինվենտարը, բանող անասունները և տնտեսական շենքերը:

Անասնապահական բրիգադները կազմվում են առնվազն յերեք տարի ժամանակով:

Արտելի վարչությունն անասնապահական բրիգադին ամրացնում ե մթերատու անասունները, սպասարկման համար անհրաժեշտ ինվենտարը, քաջող ուժը և անասնապահական շենքերը. («Որինակելի կանոնադրության» 14-րդ կետից):

1. ԱՐՏԵԼԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Կառավարման հարցերն Որինակելի կանոնադրության մեջ մանրամասն քննության են առնվում ինչպես արտելի արտադրական ու կուլտուրական խնդիրների (6-րդ կետ), այնպես և կառավարման զանազան մարմինների պարտականությունների ու իրավունքների տեսակետից (19-ից մինչև 25-րդ կետեր):

Բոլոր նրանք, ովքեր կարդացել են Որինակելի կանոնադրությունը, հավանորեն ուշադրություն են դարձրել այն բանի վրա, թե Որինակելի կանոնադրության մեջ ինչպիսի խոշոր տեղ ե գրավում արտելի հիմնական արտադրական ու կուլտուրական խնդիրների թվարկումը: Ինչո՞ւ յե Որինակելի կանոնադրությունն այդպես մանրամասն կանգ առնում այդ հարցերի վրա: Վորովհետեւ գյուղացին, չքավորն ու միջակն ի բնե, իր կյանքի պայմանների շնորհիվ, ստիպված ե յեղել բավարարվել քչով: Յեվ այժմ ել կոլտնտեսություններում հաճախ այնպես ե լինում, վոր ներկայիս կոլտնտեսականը կոլտնտեսության մեջ հասնելով միջակ տնտեսության բերքատվությանը, ապրանքայնությանն ու կյանքի մակարդակին, պատրաստ ե բավարարվելու դրանով: Մինչդեռ բանվորա-գյուղացիական պետության տեսակետից, այդ միանգամայն անթույլատրելի յե: Մենատնտես-միջակի նախկին մակարդակը—բերի և անբավարար մակարդակ ե:

Մեր յերկրի հսկայական շրջաններ համարյա գուրկ են պարտեզներից: Կարիքը գյուղում այնպիսին ե յեղել

և փոխադարձ վոխը՝ ընդհանուր կարիքի հետևանքով՝
այնչափ մեծ, վոր տնամերձ հողամասում տնկված խնձորենին վորեւե մեկը սովորաբար կոտորում եր՝ նախքան
նրա պտուղ տալը:

Մեր յերկրում տասնյակ հազարավոր լճակներ կան,
վորոնք կարող եյին միլիոնավոր փթերով ձուկ տալ:
Լճակը մաքրելու և նրա մեջ ձուկ բազմացնելու համար
պահանջվում եր ամբողջ գյուղի ընդհանուր աշխատանք:
Իսկ մի՞թե կարելի յեր մեր գյուղն ընդհանուր աշխա-
տանքի հանել, յերբ մարդիկ ապրում եյին այն ասաց-
վածքի համաձայն, թե՝ մարդը մարդու համար դայլ ե:

Մեր Զավուժեյի, Սիրիւրի հարավ-արևելյան մա-
սի հսկայական տարածություններում, Սալսկի տա-
փաստաններում, ամեն տարի կարելի յեր միլիոնավոր
փթերով հացահատիկ փրկել, յեթե դաշտերը չըջա-
պատվեյին անտառային շերտերով: Դրա համար ան-
հրաժեշտ եր ամբողջ գյուղի ընդհանուր աշխատանքը:
Դրա համար հարկավոր եր, վորպեսզի յուրաքանչյուրը
հանձին իր հարևանի, տեսներ առաջին հերթին ընդհա-
նուր աշխատանքի մասնակցողի, այլ վոչ թե դայլի:
Հին գյուղում այդ չկար:

Այլ բան ե այժմ: Այժմ մեզանում կոլտնտեսություն-
ներն ընկերական տնտեսություն են և մարդը մարդու
համար վոչ քե գայլ ե, այլ ընկեր:

Իսկապես կուլտուրական ու առաջավոր տնտեսու-
թյուն ստեղծելու, գյուղատնտեսական արտադրության
նոր ճյուղեր ստեղծելու միջոցառումների մասին Որի-
նակելի կանոնադրությունը մանրամասն խոսում ե 6-րդ
կետում:

Ով հետևում ե այն բանին, թե ինչպես սկսվեց կա-
նոնադրության քննարկումը կոլտնտեսություններում,
նա գիտե, վոր Որինակելի կանոնադրության 6-րդ կետն
ամենամարտական կետերից մեկը դարձավ: Առաջավոր
կոլտնտեսականներն այս կետում ձգտում են մտցնել
իրենց տնտեսության այն խնդիրները, վորոնք նրան
իսկապես առաջավոր կուլտուրական տնտեսություն
կդարձնեն՝ հացահատիկի հարյուր փուլ և վոչ թե հի-

սուն փուլ թերքատվությամբ, յերկու-յերեք հազար
լիտր՝ և վոչ թե ինչվոր մի չնչին հազար լիտր կաթով:
Վորքան ավելի ծավալվի իրենց իսկ կոլտնտեսական-
ների նախաձեռնությունն այդ գործում, այնքան ավե-
լի լավ: Այն, ինչ վոր սովորաբար գրվում ե կոլտնտե-
սության ցանքի պլանում—դա ամենաքիչն ե, դա մի-
այն այն հողամասերի հաշիվն ե, վորոնք պետք ե ցան-
վեն:

Առաջավոր կոլտնտեսականների նախաձեռնությունն
ու գիտակցությունը կարող են չափազանց շատ բան
ավելացնել դրան, վորպեսզի լիովին ոգտագործվեն
հանրային աշխատանքի առավելություններն ու բարձր
տեխնիկան: Այն ժամանակ կոլտնտեսականների վողջ
մասսան կտեսնի, վոր կոլտնտեսությունը պարտավոր
ե և կարող ե իր տնտեսության հաջողությունները չա-
փել վոչ թե մենատնտես-միջակի մակարդակով, այլ ու-
նեվոր ու կուլտուրայես ապրող ամենաառաջավոր հո-
ղագործ կոլտնտեսականի մակարդակով:

2. ԱՐՏԵԼԻ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Որինակելի կանոնադրության նույն այդ վեցե-
րորդ կետը մանրամասնորեն կանգ ե առնում արտելի
առջև դրված կուլտուրական խնդիրների վրա: Բանն
այն ե, վոր ունենոր կյանք չի նշանակում միայն կուշտ
կյանք: Ունեվոր կյանք—նշանակում ե և՛ կուշտ, և՛
կուլտուրական կյանք:

Հասնել ունենոր կյանքի, նշանակում ե հասնել և՛
մթերքների առատության, և՛ իսկական կուլտուրայի:

Մեր գյուղի կուլտուրան առայժմ այնպես ե, վոր
ստիպված ենք պայքար մղել ամենահասարակ բանի-
համար:

Շա՞տ ունենք արդյոք մենք գյուղեր, ստանիցաներ,
խուտորներ, ղշլաղներ ու աուլներ, վորտեղ վարսավի-
րանոց լինի: Իսկ կոլտնտեսականը չի ուզում յերեսը
մազով պատած հին մենատնտեսի նման լինել:

Շա՞տ են արդյոք մեզ մոտ այնպիսի գյուղեր, ստա-

նիցաներ, խուտորներ, զչլաղներ ու աուլներ, վորտեղ իսկական բաղնիքներ լինեն: Իսկ կոլտնտեսականն ուղղում է լողանալ բաղնիքում, ինչպես քաղաքում:

Շատ կոլտնտեսություններ ստեղծել են դաշտային կայաններ: Շա՞տ են արդյոք մեզ մոտ այնպիսի կոլտնտեսություններ, վորտեղ այդ կայանները լուսավոր ու մաքուր են, վորտեղ դրանք չեն նմանում գիշերվա ամենավատ ոթեմաններին՝ իրար վրա թափված մորդկանցով: Կոլտնտեսականը, վորը գարնանից մինչև աշուն, գիշեր-ցերեկ անց է կացնում դաշտում, ուզում է ճաշել, ուզում է քնել մաքուր ու լուսավոր կայանում:

Շա՞տ են արդյոք մեզ մոտ գյուղական այնպիսի փողոցներ, վորտեղ կարելի լինի գարնանն ու աշնանն անցնել առանց ցեխի մեջ խրվելու: Իսկ առաջավոր կոլտնտեսականն ուզում է, վոր նրա փողոցը նման լինի քաղաքի փողոցին:

Շա՞տ են արդյոք մեզ մոտ գյուղական այնպիսի փողոցներ, վորոնք ծառապատված լինեն: Դրանք հատ ու կենտ են: Քաղաքն իր փողոցները ծառապատում է: Մի՞թե այդ չի ցանկանա անել իրեն առաջավոր համարող կոլտնտեսությունը:

Կոլտնտեսությունները ամսե-ամիս ավելի յեռանդադին պայքարելու յեն ակումբներ, գրադարաններ ու ընթերցարաններ ստեղծելու համար, թերթերը, գրքերը, ռադիոն ու կինոն արմատացնելու համար:

Դարեր շարունակ մենատնտես գյուղացու անմատչելի յերազն է յեղել՝ ուտել հղփանալու չափ և խմել սիրտ խառնելու չափ ու ապա քնել մինչև կշտանալը:

Ներկայիս առաջավոր կոլտնտեսականն ուզում է բարձրացնել իր աշխատանքային վորակավորումը: Նա ուզում է դառնալ տրակտորիստ, չոֆեր, կոմբայնավար, բուժակ, անասնապահ: Նա ուզում է լսել ռադիո, կինոյում տեսնել «Չապայեվ»-ը:

Յեվ դա հասկանալի յե: Կոլտնտեսություն—նչանակում է փոչ միայն անցումն գյուղատնտեսական մանր անհատական արտադրությունից խոշոր՝ հանրային գյուղատնտեսական արտադրության, այլև գյուղական

կյանքի պայմանների մոտեցումը քաղաքի կուլտուրական կյանքի պայմաններին:

Ահա թե ինչու գյուղատնտեսական արտելի Որինտկելի կանոնադրությունը, արտելի ու նրա վարչության արտադրական պարտականությունների հետ միասին, նախատեսում է նաև արտելի ու նրա վարչության կուլտուրական պարտականությունները: Որինակելի կանոնադրությունն արտելի վարչությանն ու բոլոր անդամներին պարտավորեցնում է.

«Բարձրացնել արտելի անդամների աշխատանքային վորակավորումը, ոժանդակել կոլտնտեսականներին՝ նրանցից բերեալներն, տրակտորիստներ, կոմբայնավարներ, չոֆերներ, անասնաբուժակներ ու սանիտարներ, ձիավորներ, խողապաններ, անասնապահներ, հովիվներ, նախապաններ, խրճիթ-լաբորատորիաների աշխատողներ պատրաստելու գործում» («Որինակելի կանոնադրության» 6-րդ կետից, յենթակետ թ.):

«Բարձրացնել արտելի անդամների կուլտուրական մակարդակը, արմատացնել թերթը, զերբը, ռադիոն, կինոն, ստեղծել ակումբներ, գրադարաններ և ընթերցարաններ, ունենալ բաղնիքներ, վարսավիրանոցներ, սարքավորել լուսավոր ու մաքուր կայաններ դաշտում, կարգի բերել գյուղի փողոցները, փողոցներում տնկել զանազան, առանձնապես պտղատու ծառեր, աջակցել կոլտնտեսականներին բարելավելու և զարգարելու իրենց բնակարանները» («Որինակելի կանոնադրության» 6-րդ կետից, յենթակետ թ.):

Մենք մտած ենք, վոր համարյա յուրաքանչյուր կոլտնտեսություն սեփական վորևե բան կմտցնի կանոնադրության այս կետի մեջ, վորպեսզի առաջ տանի կուլտուրայի գործը:

3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՄՔՍԻՆ

Կառավարման կարևորագույն հարցը, դա արտելի անդամների ընդհանուր ժողովի հարցն է: Կոլտնտեսությունների նույնիսկ լավագույն նախադասների մեջ թիչ չեն այնպիսիները, վորոնք այսպես են մտածում՝ քանի

Վոր ինձ մոտ գործերը լավ են գնում, ել ինչի՞ ժամանակ պիտի կորցնեմ ընդհանուր ժողովների վրա: Կան նաև այնպիսիները, վորոնք առիթ գտած դեպքում նույնիսկ պարծենում են՝ ինձ մոտ գործերը լավ են, յես փորձված մարդ եմ, ինձ հարգում են և յես վերջին անգամ ընդհանուր ժողով եմ գումարել կես տարի առաջ:

Այդպիսի մարդիկ թեկուզ յերկնքից ել իջած լինեն, անպայման, այն ել իրենց համար անակնկալ կերպով վորակե լուրջ գործում գլխի վրա կգան: Ճեղքվածքը կոտնտեսային գործերում այդպիսի մարդկանց մոտենում ե անսպասելիորեն, ինչպես գողը գիշերով: Այդպիսի մարդիկ չեն հասկանում, վոր յերբ նոր գործ ես կառուցում, պետք ե թույլ տալ մարդկանց արտահայտել իրենց կարծիքը, իրենց փորձը, պետք ե մարդկանց հնարավորություն տալ ասել այն ամենը, ինչ վոր կուտակվել ե նրանց մեջ, պետք ե գործը տանել այնպես, վոր ամեն մի կոլտնտեսական զգա, վոր կոլտնտեսությունն իր տնտեսությունն ե:

Պետք ե գործը տանել այնպես, վոր յուրաքանչյուր կոլտնտեսական հասկանա, թե նա աշխատում ե իր համար, իր կոլտնտեսության համար և վոչ թե նախագահի համար:

Արտելի լավ նախագահ նշանակում ե վոչ միայն արտադրության հաստատակամ ու փորձված կազմակերպիչ, այլև արտադրության այնպիսի կազմակերպիչ, վորը գիտե բարձրացնել կոլտնտեսականների ամբողջ մասսայի գիտակցությունը:

Ամեն մի կոլտնտեսականի մեջ դեռ քիչ չեն յերեկվա մենատնտեսի նախապաշարումները: Դեռ շատ պեւք ե աշխատել, նրան ինչպես հարկն ե վերադաստիարակելու համար: Պետք ե ոգնել նրան աճելու, պետք ե ոգնել նրան՝ վորքան կարելի յե արագորեն բարձրացնելու այն մակարդակին, վոր ցույց տվեց հարվածային կոլտնտեսականների համագումարը: Կոլտնտեսականի աճման գործում ոգնություն ցույց տալու լավագույն մեջոցներից մեկն այն ե, վոր նա ներգրավվի վողջ ար-

տելի կյանքին վերաբերող հարցերի վնասմանը: Ահա թե ինչո՞ւ գյուղատնտեսական արտելի Որինակելի կանոնադրության մեջ նախագծված են այն կարևորագույն հարցերը, վորոնց նկատմամբ արտելի վարչության կայացրած վորոշումը՝ առանց ընդհանուր ժողովի հաստատման՝ համարվում ե անվավեր: Ահա թե ինչո՞ւ այդ հարցերի կարգն են դասվել այն բոլոր հարցերը, վորոնք վերաբերում են արտադրական պլաններին, նախահաշիվներին, պայմանագրերին, Փոնդերի չափին, ներքին կարգի կանոններին, արտելի կազմի մեջ դրոշմելու և վտարելու գործին:

Գյուղատնտեսական արտելի Որինակելի կանոնադրության մեջ այդ հարցի առթիվ ասված ե հետևյալը.

«Ընդհանուր ժողովն արտելի կառավարման բարձրագույն որդանն ե:

Ընդհանուր ժողովը՝

ա) ընտրում ե արտելի նախագահ և արտելի վարչություն, ինչպես և արտելի վերստուգիչ հանձնաժողով, ընդ վորում վերստուգիչ հանձնաժողովը հաստատվում ե խորհուրդների շրջանային գործադիր կոմիտեյի կողմից.

բ) կատարում ե նոր անդամների ընդունելությունը և անդամների վտարումն արտելի կողմից.

գ) հաստատում ե տարեկան արտադրական պլանը, մուտքի ու յեւքի նախահաշիվը, շինարարության պլանը, արտադրանքի նորմաները և աշխատանքի գնահատումն աշխուրհով:

դ) հաստատում ե մեքենատրակտորային կայանի հետ կնքվող պայմանագրերը.

յե) հաստատում ե վարչության տարեկան հաշիվետվությունը՝ վերստուգիչ հանձնաժողովի պարտադիր յեզրակացության հետ միասին, ինչպես և վարչության հաշվետվությունները գյուղատնտեսական կարևորագույն կամ պանիաների վերաբերմամբ.

զ) հաստատում ե գանաղան Փոնդերի չափը և աշխուրհի համար տրվելիք ֆթերքների ու դրամի քանակը.

ե) հաստատում ե արտելի ներքին կարգի կանոնները: Կանոնադրության այս կետում թվարկված բոլոր հար-

ցերի վերաբերմամբ արտելի վարչության ընդունած վարչումներն անվավեր են, առանց ընդհանուր ժողովի հաստատման:

Ընդհանուր ժողովը՝ արտելի անդամներին, ընդհանուր թվի առնվազն կեսը ներկա լինելու դեպքում, որինակն է բոլոր հարցերը լուծելու համար, բացի արտելի վարչության ու նախագահի ընտրության հարցից, արտելի կազմից վտարելու հարցից, վերոնք վորոշելու համար անհրաժեշտ է, փոքր ընդհանուր ժողովում ներկա լինի անդամների ընդհանուր թվի առնվազն յերկու յերրորդ մասը» («Որինակելի կանոնադրության» 20-րդ կետը):

4. ԱՐՏԵԼԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՒ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սակայն արտելի ընդհանուր ժողովն արտելի գործերի կառավարման բարձրագույն որդան հայտարարելը չի նշանակում կոլտնտեսության գործերից չլիափրավ ստեղծել: Ղեկավարել մասսաներին՝ չի նշանակում նաև քարշ գալ մասսաների հետամնաց տրամադրությունների պոչից: Վորքան ավելի իրավունքներ է տալիս Որինակելի կանոնադրությունն ընդհանուր ժողովին, այնքան ավելի լավ ու ավելի հստակորեն պետք է ղեկավարի նախագահը արտելի ու նրա բրիգադների աշխատանքը: Որինակելի կանոնադրությունը մեծ ուշադրություն է նվիրում արտելի նախագահին ու ամբողջ վարչության պարտականությունների հարցին: Խնդիրն այն է, վոր կոլտնտեսական մասսաների ինքնագործունեություն հսկայական թափն ու ծավալը զուգակցվի նախագահի ու վարչության իսկական ոպերատիվ աշխատանքի հետ: Ահա թե ինչ է ասում Որինակելի կանոնադրությունն արտելի վարչության և նրա նախագահի մասին.

«Արտելի վարչությունն արտելի գործադիր որդանն է և արտելի անդամների ընդհանուր ժողովի, առաջ պատասխանատու չե արտելի աշխատանքի համար, և պետության հանդեպ՝ արտելի պարտավորությունների կատարման համար» («Որինակելի կանոնադրության» 21-րդ կետից):

«Արտելի և նրա բրիգադների աշխատանքի ամենորոշ ղեկավարության, ինչպես և վարչության վորոշումների կատարման ամենորոշ ստուգման համար, արտելի ընդհանուր ժողովն ընտրում է արտելի նախագահ, վորը միևնույն ժամանակ հանդիսանում է վարչության նախագահ:

Նախագահը պարտավոր է վարչության նիստը գումարել ամսական առնվազն յերկու անգամ՝ ընթացիկ գործերը քննարկելու և համապատասխան վորոշումներ ընդունելու համար» («Որինակելի կանոնադրության» 22-րդ կետից):

Խոշոր արտադրության համար փորձված ղեկավարներ աճեցնելու հարցի հետ կապված է նրանց աշխատանքի ժամկետների հարցը: Յեթե արտելում նախագահները փոխվում են համարյա ամեն ամիս, ապա այդպիսի նախագահներից փորձված ղեկավարներ չես ստեղծի և արտելի տնտեսությունը պատշաճ հիմքի վրա չես դնի:

Նախագահի աշխատանքի ժամկետի հարցը — այդ միայն կանոնադրության հարցը չէ:

Կոլտնտեսությունների նախագահների աշխատանքի ժամկետն անխղճիորեն կապված է այն հանգամանքի հետ, թե ինչպես են իրականացնում շրջանային ղեկավարությունը կոլտնտեսությունների նկատմամբ:

Յերբ Որինակելի կանոնադրությունը սահմանում է, վոր արտելի վարչությունն ընտրվում է յերկու տարով, այստեղ Որինակելի կանոնադրությունը դիմում է վոչ միայն արտելի անդամներին, այլև գյուղի կուսակցական ու խորհրդային որդաններին: Գաղտնիք չէ, վոր մի շարք յերկրներում, մարզերում ու հանրապետություններում, շրջկոմներն ու շրջգործկոմները հաճախ կոլտնտեսությունների նախագահներին փոխում են առանց բնավ հարցնելու հենց կոլտնտեսություններից: Վերջերս Կենտկոմի գյուղատնտեսական բաժինը յերևան բերեց այսպիսի մի դեպք՝ Կուրսկի մարզի Նովոսելսկոյի շրջկոմի բյուրոն մի անգամից մի վորոշումով տեղափոխեց արտելի 28 նախագահ: Նովոսելսկոյի շրջկոմը դրա մասին արձանագրություն է կազ-

Քել այնպես, վոր կարծես խոսքը վերաբերում է շրջա-
նային հողբաժնի կամ շրջգործկոմի գրասենյակի աշ-
խատողներին՝ «այսինչ նախագահին այսինչ կոլտն-
տեսությունից փոխադրել այսինչ կոլտնտեսությունը»
և այլն: Ըստինքյան հականալի յե, վոր կուսակցու-
թյան կենտրոնական կոմիտեն դատապարտում է «ղե-
կավարման» նման մեթոդները, վորպես վոչ կուսակ-
ցական:

Մեզ մոտ պատահում են նաև այնպիսի պատուհա-
ղեկավարներ, վորոնք շրջանի ցանքի կամ մթերման
վատ ընթացքի պատասխանատվությունից ապաշոյա-
գրում են իրենց նրանով, վոր մարդային իշխանության
ներկայացուցիչները շրջան գալուց մի որ առաջ աշ-
խատանքից հանում են 10—15 կոլտնտեսության նախա-
դահ: Դրանով իսկ նրանք ապացուցում են իրենց վար-
չական ջանասիրությունը և կուսակցությունից կտրը-
ված լինելը:

Ավելորդ է ասել, վոր այդպիսի պրակտիկան վոչ մի
առնչություն չունի բուլչեիկյան հաստատակամության
հետ: Բուլչեիկյան հաստատակամությունը յերբեմն պա-
հանջում է վոչ միայն աշխատանքից հեռացնել կոլտն-
տեսության այն նախագահին, վորը հանցավոր կեր-
պով տապալում է կոլտնտեսությունը, այլև ձերբակա-
լել նրան: Սակայն բուլչեիկյան հաստատակամությունը
վոչ մի առնչություն չունի այն պատուհաս վարչարար-
ների «յեռանդի» հետ, վորոնք միանգամից չիլափլափ
են պատրաստում իրենց շրջանների կոլտնտեսություն-
ների նախագահներից:

Յերբ գյուղատնտեսական արտելի Որինակելի կա-
նոնադրությունն ասում է, թե արտելի նախագահն
ընտրվում է յերկու տարով, ապա այստեղ սահմանա-
փակվում է շրջկոմների ու շրջգործկոմների կողմից ա-
պորինի գործողություններ կատարելու հնարավորու-
թյունը:

Դրանով իսկ չեչտվում է, վոր այժմ կոլտնտեսու-
թյունների նկատմամբ մեր գլխավոր խնդիրն է կազմե-
րածեցնել: Ահեցնել կոլտնտեսությունների նախագահ-

ների ու բրիգադիրների իսկական բուլչեիկյան կազմեր-
ահա թե ինչ է պակասում մեզ, վորպեսզի ավելի արա-
դորեն առաջ տանենք կոլտնտեսային արտադրության
վերելքը:

Պատահականություն չէ, վոր հարվածային կոլ-
տնտեսականների համաժողովինական յերկրորդ համա-
գումարի պատվիրակների մեջ կային մեծ թվով կոլ-
տնտեսությունների ղեկավարներ, վորոնք 3—4—5 տա-
րով նստած են միևնույն կոլտնտեսության մեջ:
Դրանք արդեն իսկական ղեկավարներ են: Դրանք այն-
պիսի մարդիկ են, վորոնք ճանաչում են իրենց արտելի
յուրաքանչյուր անդամին: Դրանք այնպիսի մարդիկ են,
վորոնք գիտեն կոլտնտեսության հողի ամեն մի կտորը:
Դրանք այնպիսի մարդիկ են, վորոնք գիտեն թե սեր-
մի վոր տեսակն ամենից ավելի յե համապատասխա-
նում իրենց վայրի պայմաններին: Այդ մարդիկ գի-
տեն կոլտնտեսության ամեն մի անկյունը: Այդպիսի
ղեկավարները մեզ հարկավոր են, այդպիսիք կունե-
նանք մենք, յեթե անչեղորեն կատարենք Որինակելի
կանոնադրության սահմանած այն կանոնը, վորի հա-
մաձայն արտելի վարչությունն ու նախագահն ընտրը-
վում են յերկու տարով: Այդպիսիք կունենանք մենք,
յեթե մեր շրջանային կազմակերպությունները՝ կոլ-
տնտեսություններում աճող կազմերի նկատմամբ վոր-
պես գլխավոր կանոն ղեկավարվեն մետայուրդների
խորհրդակցության ժամանակ ընկ. Ստալինի սոված
հետևյալ ցուցումներով:

«Պետք է պահպանել ամեն մի ընդունակ և հասկացող
աշխատողին, որպիսյանի ու անեցնել նրան: Մարդկանց
պետք է հոգատարությամբ ուշի ուշով անեցնել, ինչպես
պարտիզպանն անեցնում է իր սիրած պտղատու ծառը»:

Յեթե այդպես հոգատարությամբ պետք է աճեցնել
աշխատողներին գործարաններում, վորտեղ կազմերն
ստեղծվել են տասնամյակների ընթացքում, ապա այդ
ավելի մեծ չափով վերաբերում է այն մարդկանց, վո-
րոնք նոր են ծնվում վորպես հասարակական աշխատող-

ներ: Կոլտնտեսային կադրերի համար հանրային տրնտեսությունը նոր բան է: Նրանցից ամենածերը, ամենափորձվածն ունի միայն 4—5 տարվա փորձառություն:

Յեթե մեր գյուղական կազմակերպությունները լրջորեն կատարեն ընկ. Ստալինի այդ ցուցումը, մենք անպայման արագորեն առաջ կտանենք կոլտնտեսության գործը:

Վոմանք կարծում են, թե քանի վոր Որինակելի կանոնադրությունն ընդունված է, ապա գործը պրծած է: Իսկ իրոք Որինակելի կանոնադրության ընդունման գործը նոր է սկսվում միայն: 240 հազար կոլտնտեսություն յերեք ամսում պետք է մշակեն և ընդունեն վերջնական կանոնադրություններ: Այդ գործը չի կարելի ինքնահոսի թողնել, այստեղ հարկավոր է իսկական բոլշևիկյան ղեկավարություն և ոգնություն կոլտընտեսություններին:

Վո՞րն է այժմ ամենագլխավորն ու անհետաձգելին.

ԱՌԱՋԻՆ.— Անհապաղ ձեռնամուխ լինել քարտեզների վրա դժելու կոլտնտեսությունների սահմանները, վերացնելու միջնաչերտությունը և հողի հեռավորությունը, փորպեսզի արդեն այս տարի կոլտնտեսությունների հիմնական մասը կարողանա Որինակելի կանոնադրության յերկրորդ կետի հիման վրա ստանալ պետական ակտեր՝ հողն ընդմիշտ ամրացնելու մասին:

ՅԵՐԿՐՈՐԴ.— Միալներ թույլ չտալ տնամերձ հողամասի չափը վորոշելիս: Խստիվ պահպանել Որինակելի կանոնադրության յերկրորդ կետի ցուցումները, վորը սահմանել է, վոր տնամերձ հողամասի չափը կարող է տատանվել մի քառորդ հեկտարից մինչև կես հեկտարի միջև, իսկ առանձին չրջաններում՝ մինչև մի հեկտար՝ նայած մարզի ու չրջանի պայմաններին, վորոնք սահմանում են դաշնակից հանրապետությունների հողօրհկոմատները՝ ԽՍՀՄ-ի Հողօրհկոմատի ցուցումների հիման վրա:

ՅԵՐՐՈՐԴ.— Նայած թե կանոնադրության հինգերորդ կետի համաձայն չրջանների վոր խմբին է պատկանում տվյալ վայրը, արտելի կանոնադրության մեջ դրել անասունների այն թիվը, վորը կարող է ունենալ կոլտնտեսականի տնտեսությունն անձնապես ողտադործելու համար:

ՉՈՐՈՐԴ.— Վորոշել արտելի անբաժանելի Ֆոնդի համար կատարվող հատկացումների ճիշտ չափը, առանց խախտելու Որինակելի կանոնադրության 12-րդ կետի սահմանած չրջանակները, այսինքն արտելի փոշային յեկամությունների 10, բայց 25 տոկոսից վոչ բարձր:

ՀԻՆԴԵՐՈՐԴ.— Առանձնապես իմաստակություն չանել վերջնական կանոնադրությունները մշակելիս: Յերկրի, չրջանի և տվյալ կոլտնտեսության պայմանների համաձայն, Որինակելի կանոնադրության վեցերորդ կետի մեջ մտցնել այն բոլոր փոփոխությունները, վորոնցում պետք է արտացոլվեն տեղական ԽՍՀՄ-ի հատկությունները: Որինակելի կանոնադրության մյուս կետերը չպետք է փոխել, քանի վոր նրանք վորոշում են կոլտնտեսային կյանքի կառուցման այն գլխավոր կանոնները, վորոնք ընդհանուր են բոլոր կոլտնտեսությունների համար և վորոնք ընդունվել են հարվածային կոլտնտեսականների համաժողովներին յերկրորդ համագումարի կողմից ու հաստատվել են ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհի ու Համ. Կ (բ) Կ Կենտկոմի կողմից:

ՎԵՅԵՐՈՐԴ.— Ապահովել ամեն մի գրանցվող կանոնադրության ուշադիր քննումը խորհուրդների չրջանային գործադիր կոմիտեներում և թույլ չտալ, վոր խախտվի Որինակելի կանոնադրությունը:

ՅՈԹԵՐՈՐԴ.— Արտելներում կանոնադրությունները քննարկել և ընդունել այնպես, վոր հնարավոր լինի ավելի մեծ թափով պայքարի հանել կոլտնտեսական մասսային՝ բոլոր կոլտնտեսությունները բոլշևիկյան և բոլոր կոլտնտեսականներին ունեւոր դարձնելու համար,

պայքարի հանել ցանքը հաջող կատարելու և բերքահավաքը լավ նախապատրաստելու համար:

ՈՒԹԵՐՈՐԴ.— Անշեղորեն կենսագործել Որինակելի կանոնադրության 14-րդ կետում սահմանված այն կանոնը, վորի համաձայն կոլտնտեսուհին ծննդաբերությունից մի ամիս առաջ և ծննդաբերությունից հետո մի ամիս ժամանակով ազատվում է աշխատանքից, պահպանելով իր վաստակը աշխորերի միջին թվի կեսի չափով:

ԻՆՆԵՐՈՐԴ.— Արտելում արտադրական ու կազմակերպական աշխատանքն իրոք կառուցել նոր կանոնադրության հիման վրա:

Ընկ. Ստալինի ղեկավարությամբ, հարվածային կոլտնտեսականների համամիութենական յերկրորդ համագումարն որ-ավուր աշխատել է Որինակելի կանոնադրության վրա, հաշվի առնելով առաջավոր կոլտնտեսությունների և առանձին շրջանների աշխատանքի փորձը: **Ընկ.** Ստալինը, թե համագումարից առաջ և թե համագումարի ընթացքում, հսկայական ուշադրություն է նվիրել նոր Որինակելի կանոնադրությանը: Նա լսում էր համագումարում ամեն մի կոլտնտեսականի ճառը, վերլուծում էր համագումարի հանձնաժողովում արված ամեն մի առաջարկ, զրույց էր անում տասնյակ պատգամավորների հետ, ստուգում էր գործի զանազան կողմերը,—և այդ բոլորը նրա համար, վոր մշակի այնպիսի Որինակելի կանոնադրություն, վորն իրոք ոգնի կոլտնտեսականների ամբողջ մասսային, ավելի արագորեն առաջ ընթանալու դեպի ունևոր և կուլտուրական կյանքը:

Դա մի դաս է բոլոր կոմունիստներին, թե ինչպես պետք է աշխատել կոլտնտեսային կյանքի կազմակերպման հարցերում: (Բառն, յերկարատև ծափեր):

Գ ՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԵԼԻ ՈՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ընդունված հարվածային կոլտնտեսականների Համամիութենական յերկրորդ համագումարի կողմից յեվ հաստատված ԽՍՀՄ-ի Ժողովրդական Կոմիտեների Խորհրդի ու Համ. Կ. (Բ) Կ. Կենտրոնական Կոմիտեյի կողմից 1935 թվի փետրվարի 17-ին

I

ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. շրջանի գյուղի (ստանիցայի, խուտորի, դշլաղի, աուլի) աշխատավոր գյուղաղացիները կամավոր կերպով միանում, կազմում են գյուղատնտեսական արտել, վորպեսզի արտադրության ընդհանուր միջոցներով և կազմակերպված ընդհանուր աշխատանքով կառուցեն կոլեկտիվ, այսինքն՝ հանրային տնտեսութուն, ապահովեն լիակատար հաղթանակ կուլակի դեմ, բոլոր շահագործողների ու աշխատավորության թշնամիների դեմ, ապահովեն լիակատար հաղթանակ կարիքի ու խավարի դեմ, մանր անհատական տնտեսության հետամնացության դեմ, ստեղծեն աշխատանքի բարձր արտադրողականութուն և այդպիսով ապահովեն կոլտնտեսականների լավագույն կյանքը:

Կոլտնտեսային ուղին, սոցիալիզմի ուղին, միակ ճիշտ ուղին է աշխատավոր գյուղացիների համար: Արտելի անդամները պարտավորվում են ամրացնել իրենց արտելը, աշխատել ազնվորեն, բաժանել կոլտնտեսային յեկամուտն ըստ աշխատանքի, պահպանել հանրային սեփականութունը, պահպանել կոլտնտեսությունների ունեցվածքը, պահպանել տրակտորներն ու մեքենաները, կազմակերպել ճիշտ լավ խնամքը, կատարել իրենց բանվոր-գյուղացիական պետության առաջադրանքները և այդպիսով դարձնել իրենց կոլտնտեսութունը բուլչեիկյան և բոլոր կոլտնտեսականներին՝ ունևոր:

ՀՈՂԻ ՄԱՍԻՆ

2. Վոչնչացվում են բոլոր միջնակները, վորոնք առաջ բաժանում եյին արտելի անդամների հողաբաժինները, և բոլոր դաշտային հողաբաժինները վեր են ածվում միասնական հողային մասսիվի, վորը կոչեկտիվ կերպով ոգտագործում ե արտելը:

Արտելի զբաղեցրած հողը (ինչպես և ամեն մի հող իՍՏՄ-ում) համաժողովրդական պետական սեփականություն ե: Այդ հողը բանվորա-գյուղացիական պետության որենքներով ամրացվում ե արտելին՝ անժամկետ ոգտագործման համար, այսինքն՝ ընդմիշտ և յենթակա չե վոչ առ ու ծախի, վոչ ել արտելի կողմից վարձու տրվելու:

Խորհուրդների շրջանային գործադիր կոմիտեն յուրաքանչյուր արտելի տալիս ե պետական մի ակտ՝ հողն անժամկետ ոգտագործելու համար: Այդ ակտում վորոշվում են արտելի ոգտագործած հողի չափն ու ճիշտ սահմանները, ընդ վորում այդ հողերի կրճատում չի թույլատրվում, այլ թույլատրվում ե միայն ավելացնել դրանք՝ կամ պետական ֆոնդի ազատ հողերի հաշվին կամ թե մենատնտեսների զբաղեցրած ավելորդ հողերի հաշվին, այն պայմանով, վոր արտելի հողաչերտերի մեջ վոչ մի այլ հողաչերտ չմտնի:

Յուրաքանչյուր կոլտնտեսականի տնտեսության անձնական ոգտագործման համար հանրայնացված հողերից հատկացվում ե վորք հողակտոր, վորպես տնամերձ հողամաս (բանջարանոց, պարտեզ):

Կոլտնտեսականի տնտեսության կողմից անձնապես ոգտագործվող տնամերձ հողամասի չափը (չհաշված բնակելի շենքերի բռնած հողը), կարող ե լինել մի քուռորդ հեկտարից մինչև կես հեկտար, իսկ առանձին շրջաններում՝ նաև մինչև մեկ հեկտար, նայած մարդային ու շրջանային պայմաններին, վորոնք սահմանում են դաշնակից հանրապետությունների հողժողկոմատի ցուցումների հիման վրա:

3. Արտելի միասնական հողային մասսիվը վոչ մի դեպքում չպետք ե պակասի: Արգելվում ե արտելից դուրս յեկած անդամներին հող հատկացնել ի հաշիվ արտելի հողային տարածության: Արտելից դուրս յեկողները կարող են հող ստանալ միմիայն պետական հողային ֆոնդի ազատ հողերից:

Արտելի հողերը բաժանվում են դաշտերի՝ հաստատված ցանքաշրջանառության համաձայն: Ցանքաշրջանառության դաշտերում դաշտավարական յուրաքանչյուր բրիգադին մշտական հողամաս ե ամրացվում ցանքաշրջանառության ամբողջ ժամանակաշրջանի համար:

Անասնապահական խոշոր ֆերմաներ ունեցող կոլտնտեսություններում անհրաժեշտության դեպքում բավականաչափ հող լինելիս կարելի յե առանձնացնել վորոշ հողամասեր, վորոնք ամրացվում են ֆերմային և ոգտագործվում են ֆերմայի անասունների համար կերաբույսեր ցանելու նպատակով:

III

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

4. Հանրայնացվում են՝ բոլոր բանող անասունները, գյուղատնտեսական ինվենտարը (գութանը, շարքացանը, փոցիւր, կալսիչը, հնձիչը), սերմացվի պաշարները, կերի միջոցները՝ հանրայնացված անասունները պահպանելու համար անհրաժեշտ քանակությամբ, արտելային տնտեսությունը վարելու համար անհրաժեշտ տնտեսական շենքերը և գյուղատնտեսության մթերքները վերամշակող բոլոր ձեռնարկությունները:

Չեն հանրայնացվում և մնում են կոլտնտեսականի տնտեսության անձնական ոգտագործման համար՝ բլնակելի շենքերը, նրա անձնական անասուններն ու թռչունները և կոլտնտեսականի տնտեսության անձնական ոգտագործման անասունների պահպանության համար անհրաժեշտ տնտեսական շենքերը:

Գյուղատնտեսական ինվենտարը հանրայնացնելիս,

արտելի անդամներին մնում է անձնապես ոգտագործելու համար գյուղատնտեսական այն մանր ինվենտարը, վորն անհրաժեշտ է տնամերձ հողամասում կատարվելիք աշխատանքի համար:

Արտելի վարչությունն անհրաժեշտ դեպքում հանրայնացված բանող անասուններից առանձնացնում է մի քան ձի՝ արտելի անդամների անձնական կարիքները վճարով սպասարկելու համար:

Արտելը կազմակերպում է խառն անասնապահական ապրանքային ֆերմա, կամ մեծ քանակությամբ անասուններ լինելու դեպքում՝ մի քանի մասնագիտացված՝ անասնապահական ապրանքային ֆերմաներ:

5. Հացահատիկային, բամբակացան, ճակնդեղացան, վուշացան, կանեփացան, կարտոֆիլացան-բանջարաբուծական, թեյաբուծական ու ծխախոտագործական շրջաններում յուրաքանչյուր կոլտնտեսականի տնտեսությունը կարող է անձնական ոգտագործման համար ունենալ մի կով, մինչև յերկու գլուխ յեղջյուրավոր անասունի մատղաշ, մի մայր խոզ իր ձագերով, կամ, յեթե կոլտնտեսության վարչությունն անհրաժեշտ գտնի՝ յերկու մայր խոզ իրենց ձագերով, մինչև 10 վոչխար ու այծ միասին, անսահմանափակ քանակությամբ թռչուն ու ճագար և մինչև 20 փեթակ:

Չարդացած անասնապահություն ունեցող հողագործական շրջաններում յուրաքանչյուր կոլտնտեսականի տնտեսություն կարող է անձնական ոգտագործման համար ունենալ 2-3 կով և, բացի դրանից, մատղաշներ, 2-ից մինչև 3 մայր խոզ իրենց ձագերով, 20—25 վոչխար ու այծ միասին, անսահմանափակ քանակությամբ թռչուն ու ճագար և մինչև 20 փեթակ: Այդ շրջանների թվին են պատկանում, որինակ, Ղազախստանի քոչվորային շրջաններին վոչ սահմանակից հողագործական շրջանները, Բելոռուսիայի անտառային շրջանները, Ուկրաինայի՝ Չերնիգովի ու Կիևի մարզերի անտառային շրջանները, Արևմտյան Սիբիրի յերկրի Բարաբինի տափաստանի շրջանները և Մերձ-Ալթայյան շրջանները, միսկի մարզի շրջանների Իշիմի ու Տոբոլսկի խմբերը,

Բաշկիրիայի լեռնային մասը, Արևելյան Սիբիրի արևելելյան մասը, Հեռավոր Արևելյան յերկրի հողագործական շրջանները, Հյուսիսային յերկրի շրջանների Վոլոգդայի և Խոլմոգորյան խմբերը:

Վոչ քոչվոր ու կիսաքոչվոր անասնապահության շրջաններում, վորտեղ հողագործությունը փոքր նշանակություն ունի, իսկ անասնապահությունը վճռական դեր է խաղում տնտեսության մեջ, յուրաքանչյուր կոլտնտեսականի տնտեսություն կարող է անձնական ոգտագործման համար ունենալ 4-ից մինչև 5 կով և, բացի դրանից, մատղաշներ, 30-ից մինչև 40 վոչխար ու այծ միասին, 2—3 մայր խոզ իրենց ձագերով, անսահմանափակ քանակությամբ թռչուն, ճագար, մինչև 20 փեթակ, ինչպես և մի ձի, կամ կումիս տվող մի զամբիկ, կամ յերկու ուղտ, կամ յերկու եշ, կամ յերկու ջորի: Այդ շրջանների թվին են պատկանում, որինակ՝ Ղազախստանի անասնապահական շրջանները, Թուրքմենիայի, Տաջիկստանի, Ղարախալպակի և Կիրգիզիայի անասնապահական շրջանները, Ոյրոթյան, Խակասիան, Բուրիաթ-Մոնղոլիայի արևմտյան մասը, Կալմիկների ինքնավար մարզը, Հյուսիսային Կովկասի—Գաղստանի ինքնավար ՍՍՀ-ի, Չեչենո-Ինգուշիայի, Կարաբդինո-Բալկարիայի, Կարաչայի և Ոսեթինյան ինքնավար մարզերի լեռնային շրջանները, ինչպես և Ադրբեջանի, Հայաստանի ու Վրաստանի լեռնային շրջանները:

Քոչվոր անասնապահության շրջաններում, վորտեղ հողագործությունը համարյա վոչ մի նշանակություն չունի, իսկ անասնապահությունը հանդիսանում է տնտեսության համապարփակ ձևը, յուրաքանչյուր կոլտնտեսականի տնտեսություն կարող է անձնական ոգտագործման համար ունենալ 8—10 կով և, բացի դրանից, մատղաշներ, 100—150 վոչխար և այծ միասին, անսահմանափակ քանակությամբ թռչուն, մինչև 10 ձի, 5—8 ուղտ: Այդ շրջանների թվին են պատկանում, որինակ՝ Ղազախստանի քոչվորական շրջանները, Ղազախստանի շրջանը, Բուրիաթ-Մոնղոլիայի քոչվորական շրջանները:

ԱՐՏԵԼԻ ՅԵՎ ՆՐԱ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅՈՒՆԸ

6. Արտելը պարտավորվում է իր կոլեկտիվ տնտեսությունը վարել պլանով, ճշտիվ կատարելով բանվորա-գյուղացիական կառավարության որգանների սահմանած դյուղատնտեսական արտադրության պլանները և արտելի պարտավորությունները պետության հանդեպ:

Արտելն ընդունում է ճշտորեն կատարելու համար ցանքի, ցելի, շարամեջ մշակման, բերքահավաքի, կալսելու և աշնանավարի պլանները, վորոնք կազմվում են կոլտնտեսությունների դրությունն ու առանձնահատկությունները հաշվի առնելով, — ինչպես և անասնապահության զարգացման պետական պլանը:

Արտելի վարչությունը և բոլոր անդամները պարտավորվում են.

ա) բարձրացնել կոլտնտեսային դաշտերի բերքատվությունը, մտցնելով և պահպանելով կանոնավոր ցանքաշրջանառություն, խորը հերկ, վոչնչացնելով մոլախոտերը, ընդարձակելով ու լավ մշակելով ցելերն ու աշնանավարը, ժամանակին ու խնամքով կատարելով տեխնիկական բույսերի շարամեջ մշակումը, ժամանակին բուկ տալով բամբակը, պարարտացնելով հողը՝ թե անասնապահական ապրանքային ֆերմաների և թե կոլտնտեսականի տնտեսության գոմադրով, հանքային պարարտանյութերով, պայքար մղելով դյուղատնտեսական վնասատուների դեմ, ժամանակին ու խնամքով հավաքելով բերքն առանց կորստի, պահպանելով ու մաքրելով վորոգիչ կառուցումները, պահպանելով անտառները, տնկելով դաշտերը պահպանող անտառաչրտեր, խստիվ պահպանելով տեղական հողային որգանների սահմանած ագրոտեխնիկական կանոնները:

բ) ցանքի համար ընտրել լավագույն սերմեր, մաքրել դրանք ամեն տեսակի աղբից, պահպանել հափշտակումից ու փչացումից, պահել դրանք մաքուր ոգտվոխ-

վող շենքերում, ընդարձակել տեսակավոր սերմացվի ցանքերը:

գ) ընդարձակել ցանքերի տարածությունը՝ ոգտագործելով արտելի տնորինություն տակ գտնված ամբողջ հողը, բարելավելով և մշակելով բարձի թող արված հողերը, հերկելով խոպան հողերը և կիրառելով ներկոլտնտեսային հողաշինարարություն:

դ) հանրային հիմունքներով լրիվ ոգտագործել արտելին պատկանող ամբողջ քաշող ուժը, ամբողջ ինվենտարը, դյուղատնտեսական գործիքները, սերմացուն և արտադրության մյուս միջոցները, ինչպես և այն բոլոր տրակտորները, շարժիչները, կալսիչները, կոմբայնները և մյուս մեքենաները, վոր բանվորա-գյուղացիական պետությունը մեքենատրակտորային կայանների միջոցով՝ վորպես ոգնություն տալիս է կոլտնտեսություններին, կազմակերպել հանրայնացված կենդանի ու մեռյալ ինվենտարի ճիշտ խնամքը, աշխատելով, վոր կոլեկտիվ տնտեսության մեջ անասուններն ու ինվենտարը լավ դրության մեջ լինեն:

յե) կազմակերպել անասնապահական ֆերմաներ, իսկ վորտեղ հնարավոր է՝ նաև ձիաբուծական ֆերմաներ, ավելացնել անասունների թիվը և բարելավել անասունների ցեղն ու մթերատվությունը ֆերմաներում, արտելային արտադրության մեջ աղնվորեն աշխատող անդամներին ոգնություն ցույց տալ՝ կով և մանր անասուն ձեռք բերելու գործում, ցեղական բարելավված արտադրողներով սպասարկել վոչ միայն ֆերմաների անասուններին, այլև արտելի անդամներին կողմից անձնապես ոգտագործվող անասուններին, պահպանել սահմանված զոոտեխնիկական և անասնաբուժական կանոնները:

զ) ընդարձակել կերաբույսերի արտադրությունը, բորելավել մարգագետիններն ու արոտավայրերը, ոգնություն ցույց տալ հանրային արտադրության մեջ բարեխղճորեն աշխատող արտելի անդամներին, ապահովելով նրանց համար, վորտեղ այդ հնարավոր է՝ կոլտնտեսային արոտավայրերից ոգտվելը, ինչպես

և ըստ հնարավորության կեր տալով՝ նրանց տնձնա-
կան ոգտագործման անասունների համար ի հաշիվ
աշխուրների.

ե) զարգացնել գյուղատնտեսական արտադրության
մյուս բոլոր ճյուղերը՝ համաձայն տեղի բնական պայ-
մանների և տնայնագործական զբաղմունքները՝ համա-
ձայն շրջանի պայմանների, պահպանել ու մաքրել գո-
յություն ունեցող լճակները, կառուցել նորերը և զար-
գացնել նրանց մեջ ձկնատնտեսություն.

ը) կազմակերպել տնտեսական ու հանրային շեն-
քերի շինարարությունը հանրային հիմունքներով.

թ) բարձրացնել արտելի անդամների աշխատան-
քային վորակավորումը, ոժանդակել կոլտնտեսական-
ներին՝ նրանցից բրիգադիրներ, տրակտորիստներ, կոմ-
բայնավարներ, չոֆերներ, անասնաբուժակներ ու սանի-
տարներ, ձիապաններ, խոզապաններ, անասնապահներ,
հովիվներ, նախրապաններ, խրճիթ-լաբորատորիաների
աշխատողներ պատրաստելու գործում.

ժ) բարձրացնել արտելի անդամների կուլտուրա-
կան մակարդակը, արմատացնել թերթը, գիրքը, ուս-
դիոն, կինոն. ստեղծել ակումբներ, զբաղարաններ և
ընթերցարաններ, ունենալ բաղնիքներ, վարսավիրա-
նոցներ, սարքավորել լուսավոր ու մաքուր կայաններ
դաշտում, կարգի բերել գյուղի փողոցները, փողոցնե-
րում տնկել զանազան, առանձնապես պտղատու ծառեր,
սնկացել կոլտնտեսականներին՝ բարելավելու և զար-
գարելու իրենց բնակարանները.

ժա) ներգրավել կանանց կոլտնտեսային արտա-
դրության և արտելի հասարակական կյանքի մեջ, ըն-
դունակ և փորձված կոլտնտեսուհիներին առաջ քաշե-
լով ղեկավար աշխատանքի, ըստ հնարավորության
թեթևացնելով նրանց տնային աշխատանքը՝ մասուրներ,
մանկական հրապարակներ և այլն ստեղծելու միջո-
ցով:

ԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

7. Արտելի անդամի ընդունելությունը կատարում
է ընդհանուր ժողովը, վորը հաստատում է վարչու-
թյան կողմից մտցված նոր անդամների ցուցակները:

Արտելի անդամ կարող են դառնալ բոլոր աշխա-
տավորները՝ 16 տարեկանից սկսած, ինչպես կանայք,
այնպես ել տղամարդիկ:

Արտելի մեջ չեն ընդունվում կուլակները և ընտ-
րական իրավունքներից զրկված բոլոր անձինք:

Մանրություն.— Այս կանոնից թույլատրվում է
բացառություն անել՝

ա) ձայնագուրկների այն զավակների վերաբերմամբ,
վորոնք մի շարք տարիների ընթացքում զբաղված են հան-
րոգուտ աշխատանքով և աշխատում են բարեխղճորեն.

բ) նախկին այն կուլակների և նրանց ընտանիքի ան-
դամների վերաբերմամբ, վորոնք արտաքսված լինելով
հակախորհրդային և հակակոլտնտեսային յեղությունների հա-
մար, իրենց նոր բնակավայրում յերեք տարվա ընթաց-
քում իրենց ազնիվ աշխատանքով և խորհրդային իշխա-
նության ձեռնարկումներին ոժանդակելով ցույց են տվել,
վոր իրենք ուղղվել են:

Այն մենատնտես գյուղացիները, վորոնք արտել
մտնելուց առաջ յերկու տարվա ընթացքում վաճառել
են իրենց ձիերը և սերմացու չունեն, արտել են ըն-
դունվում այն պայմանով, վոր պարտավորվեն իրենց
յեկամուտներից մինչև վեց տարի ժամանակամիջո-
ցում մաս-մաս մուծել ձիու արժեքը և սերմացուն՝
րնամթերքով:

8. Անդամների վտարումն արտելից կարող է կա-
տարվել միմիայն արտելի անդամների ընդհանուր ժո-
ղովի վորոշմամբ, վորին ներկա յե արտելի անդամ-
ների ընդհանուր թվի առնվազն $\frac{2}{3}$ մասը: Արտելի ան-
դամների ընդհանուր ժողովի արձանագրության մեջ
անսրայման մատնանշվում է ժողովին ներկա գտնվող

կոյտնտեսականների թիվը և վտարելու համար քվե տվողների թիվը:

Այն դեպքում, յերբ արտելի անդամը խորհուրդ-
ների շրջանային գործադիր կոմիտեյին բողոքում է իր
վտարման դեմ, հարցը վերջնականապես լուծում է
խորհուրդների շրջանային գործադիր կոմիտեյի նա-
խագահությունը՝ արտելի վարչության նախագահի և
բողոքատվի ներկայությամբ:

VI

ԱՐՏԵԼԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

9. Արտել մտնողները պետք է մուծեն մուտքի
վճար դրամով 20—40 ռուբլի յուրաքանչյուր տնտե-
սության համար, նայած նրանց տնտեսության կարո-
ղությանը: Մուտքի վճարները մտցվում են արտելի
անբաժանելի ֆոնդի մեջ:

10. Արտելի անդամների հանրայնացված գույքի
արժեքի (բանող անասուններ, ինվենտար, տնտեսական
չենքեր և այլն) մի քառորդից մինչև կեսը հատկացվում
է արտելի անբաժանելի ֆոնդին, ըստ վորում անբա-
ժանելի կապիտալին արվող հատկացման ավելի բարձր
տոկոս է կիրառվում ավելի ուժեղ տնտեսությունների
նկատմամբ: Գույքի մնացած մասը մտցվում է արտե-
լի անդամի փայավճարի մեջ:

Վարչությունն արտելի կազմից դուրս յեկող ան-
դամների հաշիվները մաքրում և նրանց փայավճարը
վերադարձնում է դրամով, ընդ վորում արտելից դուրս
յեկողին կարող է հոգաբարձին տրվել միմիայն արտելի
հոգային տարածության սահմաններից դուրս: Հաշ-
վետեսը, վորպես կանոն, կատարվում է տնտեսական
տարին վերջանալուց հետո:

11. Արտելն իր ստացած բերքից և անասնապա-
հության մթերքներից՝

ա) կատարում է պետության հանդեպ մթերք
հանձնելու և սեռմվարկերը վերադարձնելու իր ունե-
ցած պարտավորությունները, մեքենատրակտորային
կայանին բնամթերքով վճարում է մեքենատրակտորա-

յին կայանի կատարած աշխատանքի համար որենքի
ուժ ունեցող կնքված պայմանագրի համաձայն, կա-
տարում է կոնտրակտացիայի պայմանագրերը:

բ) սերմացու յե առանձնացնում ցանքի համար և
կեր՝ անասուններին կերակրելու համար ամբողջ տար-
վա պահանջի չափով, ինչպես և անբերրիութունից ու
կերի պակասությունից ապահովելու համար ստեղծում
է անձեռնամխելի, տարեց տարի վերականգնվող սերմի
ու կերի ֆոնդ՝ տարեկան պահանջի 10—15 տոկոսի չա-
փով:

գ) ընդհանուր ժողովի վորոշմամբ հատուկ ֆոնդ
է ստեղծում հաշմանդամներին, ծերերին, ժամանակա-
վորապես իրենց աշխատունակությունը կորցրածնե-
րին, կարմիր բանակայինների կարիքավոր ընտանիք-
ներին, մանկամսուրներին ոգնելու և վորբերի պահ-
պանման համար—այս բոլորը պիտի կազմի ընդհանուր
արտադրանքի յերկու տոկոսից վոչ ավելին:

դ) արտելի անդամների ընդհանուր ժողովի վորո-
շած չափով հատկացնում է մթերքների մի մասը՝ պե-
տությանը կամ չուկայում վաճառելու համար:

յե) արտելի բերքի և նրա անասնապահության
մթերքների մնացած ամբողջ մասսան արտելը բաշխում
է իր անդամների մեջ՝ ըստ աշխրորների:

12. Արտելն իր ստացած դրամական յեկամուտ-
ներից՝

ա) պետությանը տալիս է որենքով սահմանված
հարկերը և ապահովագրական վճարումներ է կատա-
րում:

բ) անհրաժեշտ ծախսեր է անում արտադրական
ընթացիկ կարիքների համար, այն է՝ գյուղատնտեսա-
կան գործիքների ընթացիկ նորոգումը, անասունների
բուժումը, պայքար վնասատուների դեմ և այլն:

գ) հոգում է արտելի վարչատնտեսական ծախսե-
րը, այդ նպատակով հատկացնելով փողային յեկա-
մուտների յերկու տոկոսից վոչ ավելին:

դ) միջոցներ է հատկացնում կուլտուրական կարիք-
ներին, այն է՝ բրիգադիներ և այլ կազմեր պատրաս-

տելու, մսուրներ կազմակերպելու, ռադիո դենլու և այլն.

յե) լրացնում ե արտելի անբաժանելի ֆոնդը՝ գյուղատնտեսական գործիքներ և անասուններ գնելու, շինանյութերի արժեքը վճարելու և գրսից շինարարությանը ներգրավվող բանվորների հետ հաշիվ տեսնելու համար, գյուղատնտեսական բանկին յերկարատե վարկերի հերթական վճարներ մուծելու համար, ընդ վորում հոգուտ անբաժանելի ֆոնդի հատկացումներ ու լրացումներ են կատարվում արտելի դրամական յեկամուտների 10 տոկոսից, բայց վոչ ավելի քան 20 տոկոսի չափով.

զ) արտելի դրամական յեկամուտների մնացած ամբողջ գումարն արտելը բաշխում ե իր անդամների միջև, ըստ աշխորերի:

Ստացված բոլոր մուտքերն անպայման գրանցվում են արտելի մուտքի մատյաններում՝ հենց ստացվելու օրը:

Արտելի վարչությունը կազմում ե թե յեկամուտների մուտքի և թե ծախսի միջոցների տարեկան նախահաշիվ, վորն ուժի մեջ ե մտնում միմիայն արտելի անդամների ընդհանուր ժողովի կողմից հաստատվելուց հետո:

Վարչությունը միջոցներ կարող ե ծախսել միմիայն այն հոգվածների համաձայն, վորոնք նախատեսված են նախահաշիվով: Վարչությանը չի թույլատրվում միջոցներն ինքնակամ կերպով փոխադրել ծախսի նախահաշիվի մի հոգվածից մյուսը, և միջոցները մի հոգվածից մյուսը փոխադրելու համար վարչությունը պարտավոր ե ստանալ ընդհանուր ժողովի թույլտվությունը:

Արտելն իր ազատ միջոցները պահում ե բանկում՝ իր ընթացիկ հաշվում կամ խնայողական դրամարկիում: Միջոցներն ընթացիկ հաշիվից դուրս են գրվում միմիայն արտելի վարչության հրամանով, վորը վավերական ե արտելի նախագահի ու հաշվապահի ստորագրությամբ:

ԱՇԵԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ՎԱՐՁԱՏՐՈՒՄՆ ՈՒ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

13. Արտելի տնտեսության բոլոր աշխատանքները կատարվում են նրա անդամների անձնական աշխատանքով, համաձայն ընդհանուր ժողովի ընդունած ներքին կարգի կանոնների: Գյուղատնտեսական աշխատանքներ համար վարձով թույլատրվում ե ոգտագործել միմիայն այն անձանց, վորոնք ունեն մասնագիտական գիտելիքներ և պարտատություն (ադրոնոմներ, ինժեներներ, տեխնիկներ և այլն):

Թույլատրվում ե ժամանակավոր բանվորներ վարձել միմիայն բացառիկ դեպքերում, յերբ չտապ աշխատանքները հնարավոր չե կատարել պահանջված ժամկետին արտելի անդամների առկա ուժերով նրանց լիակատար ծանրաբեռնության դեպքում, ինչպես և չինարարական աշխատանքների համար:

14. Վարչությունն արտելի անդամներից ստեղծում ե արտագրական բրիգադներ:

Դաշտավարական բրիգադներ են կազմվում առնվազն լիակատար ցանքաշրջանառության ժամանակի համար:

Դաշտավարական յուրաքանչյուր բրիգադին կուտնտեսության վարչությունը հատուկ արձանագրությամբ ամրացնում ե նրան անհրաժեշտ ամբողջ ինվենտարը, բանող անասունները և տնտեսական շենքերը:

Անասնապահական բրիգադները կազմվում են առնվազն յերեք տարի ժամանակով:

Արտելի վարչությունն անասնապահական բրիգադին ամրացնում ե մթերատու անասունները, սպասարկման համար անհրաժեշտ ինվենտարը, քաշող ուժը և անասնապահական շենքերը:

Արտելի անդամների մեջ աշխատանքը բաշխում ե անմիջականորեն բրիգադիւրը, վորը պարտավոր ե լավագույն ձևով ոգտագործել իր բրիգադի յուրաքանչյուր կուտնտեսականի, թույլ չտալով վոչ մի խնա-

միություն և ընտանեկանություն՝ աշխատանքը բաշխելիս և խստիվ հաշվի առնելով ամեն մեկի աշխատանքային վորակավորումը, փորձն ու ֆիզիկական ուժը, իսկ հղի կանանց և ծծմայրերի նկատմամբ նրանց աշխատանքը թեթևացնելու անհրաժեշտությունը, աղատելով նրանց աշխատանքից ծննդաբերությունից մի ամիս առաջ և ծննդաբերությունից մի ամիս հետո, ապահովելով այդ յերկու ամսվա համար նրանց հասանելիքը՝ նրանց աշխոթերի միջին վաստակի կեսի չափով:

15. Գյուղատնտեսական աշխատանքները կատարվում են գործավարձի հիման վրա:

Արտելի վարչությունը մշակում է և կոլտնտեսականների ընդհանուր ժողովը հաստատում է բոլոր գյուղատնտեսական աշխատանքների պլանը, արտագրանքի նորմաները և յուրաքանչյուր աշխատանքի գնահատումներն աշխոթերով:

Յուրաքանչյուր աշխատանքի համար սահմանվում են բարեխղճորեն աշխատող կոլտնտեսականին մատչելի արտադրանքի նորմաներ, հաշվի առնելով բանող անասունների, մեքենաների ու հողի դրությունը: Յուրաքանչյուր աշխատանք, որինակ՝ մի հեկտարի վարը, մի հեկտարի ցանքը, մի հեկտար բամբակի բուկ տալը, մի տոնն հացահատիկի կախումը, մի ցենտներ ճակնդեղի հանումը, մի հեկտար վուշի գդելը, մի հեկտար վուշի թրջոցը, մի լիտր կաթ կթելը և այլն, գնահատվում է աշխոթերով՝ նայած աշխատողից պահանջված վորակավորմանը, աշխատանքի բարդությանը, դժվարությանը և արտելի համար ունեցած կարևորությանը: Բրիգադիրն առնվազը չաբաթը մեկ անգամ հաշվում է արտելի յուրաքանչյուր անդամի կատարած ամբողջ աշխատանքը և սահմանված գնահատումների համաձայն կոլտնտեսականի աշխատանքային գրքուկում գրանցում է նրա վաստակած աշխոթերի քանակը:

Արտելի վարչությունն ամիսը մեկ անգամ կախում

է արտելի անդամների ցուցակը, մատնանշելով նախորդ ամսում նրանց վաստակած աշխոթերի քանակը:

Յուրաքանչյուր կոլտնտեսականի աշխատանքի տարեկան արդյունքը և յեկամուտը, բացի հաշվապահից, անպայման հաստատվում է բրիգադիրի և արտելի նախագահի կողմից: Արտելի յուրաքանչյուր անդամի վաստակած աշխոթերի ցուցակը կախվում է ի գիտություն բոլորի՝ արտելի յեկամուտների բաշխումը հաստատող ընդհանուր ժողովից ամենաուշը յերկու չաբաթ առաջ:

Յեթե դաշտավարական բրիգադը, լավ աշխատանքի շնորհիվ իրեն ամբացված հողամասից ստանում է միջին կոլտնտեսայինից բարձր բերք, կամ անասնապահական բրիգադը լավ աշխատանքի շնորհիվ ապահովում է կովերի ավելի բարձր կաթնատվությունը, անասունների ավելի գիրությունը և մատղաշների լիակատար պահպանումը, ապա արտելի վարչությունն այդպիսի բրիգադի բոլոր անդամների յեկամուտի վրա հավելումներ է անում նրանց վաստակած աշխոթերի ամբողջ թվի մինչև 10 տոկոսի չափով, բրիգադի աչքի ընկնող հարվածայիններին՝ մինչև 15 տոկոսի չափով, իսկ բրիգադիրին և ֆերմայի վարիչին՝ մինչև 20 տոկոսի չափով:

Յեթե դաշտավարական բրիգադը վատ աշխատանքի պատճառով իրեն ամբացված հողամասերից հավաքում է միջին կոլտնտեսայինից ցածր բերք կամ անասնապահական բրիգադն իր վատ աշխատանքի պատճառով տալիս է միջակից ցածր կաթնատվություն, անասունների գիրություն և մատղաշի պահպանում, ապա արտելի վարչությունն այդպիսի բրիգադի բոլոր անդամների յեկամուտներից պահումներ է կատարում՝ նրանց վաստակած աշխոթերի ամբողջ թվի մինչև 10 տոկոսի չափով:

Արտելի յեկամուտների բաշխումն անդամների միջև կատարվում է բացառապես արտելի յուրաքանչյուր անդամի վաստակած աշխոթերի քանակի համաձայն:

16. Տարվա ընթացքում արտելի անդամին կարելի է դրամական ավանս տալ վոչ ավելի, քան աշխատանքի համար նրան հասնող գումարի 50 տոկոսի չափով:

Վարչությունն արտելի անդամներին բնավճարով ավանս է տալիս հացահատիկը կալսելու սկզբից՝ կոտնտեսության ներքին կարիքներին հատկացված 10-15 տոկոս կալսված հացահատիկից:

Տեխնիկական մշակույթների ցանքով զբաղվող արտելում, արտելի անդամի դրամական յեկամուտը վճարվում է առանց սպասելու, վոր վերջանա բամբակի, վուշի, կանեփի, ճակնդեղի, թեյի, ծխախոտի հանձնումը պետությանը, այլ հանձնելուն գուզընթաց, առնվազն չաբաթը մեկ անգամ՝ հանձնված արտադրանքի համար արտելի ստացած գրամի 60 տոկոսի չափով:

17. Արտելի բոլոր անդամները պարտավորվում են խստիվ պահպանել իրենց կոլտնտեսային սեփականությունը և կոլտնտեսային դաշտերում աշխատող պետական մեքենաները, աշխատել ազնվորեն, յենթարկվել կանոնադրության պահանջներին և ընդհանուր ժողովի ու վարչության վորոշումներին, պահպանել ներքին կարգի կանոնները, ճշտիվ կատարել վարչության և բրիգադիրի կողմից նրանց հանձնարարված աշխատանքը և հասարակական պարտականությունները, խստիվ պահպանել աշխատանքի կարգապահությունը:

Հանրային գույքին անտնտեսորեն ու անարտացավ վերաբերվելու համար, առանց հարգելի պատճառների աշխատանքի դուրս չգալու, վատորակ աշխատանքի և աշխատանքային կարգապահության ու կանոնադրության այլ խախտումներ կատարելու համար, վարչությունը մեղավորներին տույժի յե յենթարկում ներքին կարգի կանոնների համաձայն. որինակ՝ կրկին կատարել տալ վատորակ կատարված աշխատանքն առանց աշխուրբը հաշվելու, նախազգուշացում, հանդիմանություն անել, պարսավանքի յենթարկել ընդհանուր ժողովում, բարձրացնել սե տախտակի, տուգանել մին-

չե հինգ աշխուրի չափով, փոխադրել ցածր աշխատանքի, ժամանակավորապես հեռացնել աշխատանքից:

Այն դեպքերում, յերբ դաստիարակելու և պատթելու համար արագելի ձեռք առած բոլոր միջոցները չեն ներգործում, վարչությունն ընդհանուր ժողովում դնում է արտելի անուղղելի անդամներին արտելից վտարելու հարցը:

Վտարումը կատարվում է գյուղատնտեսական արտելի կանոնադրության 8-րդ կետում սահմանված կարգով:

18. Հանրային կոլտնտեսային և պետական սեփականության ամեն մի հափշտակում, դեպի արտելի գույքն ու անասունները և մեքենատրակտորային կայանների մեքենաները ցույց տրվող ամեն մի վնասաբարական վերաբերմունք արտելը դիտում է վորպես դավաճանություն՝ կոլտնտեսության ընդհանուր գործին և ոգնություն՝ ժողովրդի թշնամիներին:

Կոլտնտեսային կարգերի հիմունքներն այդպես հանցավոր կերպով խախտելու համար մեղավոր անձինք, արտելի կողմից դատի յեն տրվում՝ բանվորագյուղացիական պետության որենքների ամբողջ խըստությամբ նրանց պատթելու համար:

VIII

ԱՐՏԵԼԻ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

19. Արտելի գործերը կառավարում է արտելի անդամների ընդհանուր ժողովը, իսկ ժողովների միջև ընկած ժամանակամիջոցում՝ ընդհանուր ժողովի ընտրած վարչությունը:

20. Ընդհանուր ժողովն արտելի կառավարման բարձրագույն որդանն է:

Ընդհանուր ժողովը՝

ա) ընտրում է արտելի նախագահ և արտելի վարչություն, ինչպես և արտելի վերստուգիչ հանձնաժողով, ընդ վորում վերստուգիչ հանձնաժողովը հաստատում է խորհուրդների չրջանային գործադիր կոմիտեյի կողմից:

բ) կատարում է նոր անդամների ընդունելութունը և անդամների վտարումն արտելի կազմից.

գ) հաստատում է տարեկան արտադրական պլանը, մուտքի ու յեւքի նախահաշիվը, շինարարության պլանը, արտադրանքի նորմաները և աշխատանքի գնահատումն աշխուրեքով.

դ) հաստատում է մեքենատրակտորային կայանի հետ կնքվող պայմանագիրը.

յե) հաստատում է վարչության տարեկան հաշիվ-տվությունը՝ վերստուգիչ հանձնաժողովի պարտադիր յեզրակացության հետ միասին, ինչպես և վարչության հաշիվետվությունները գյուղատնտեսական կարևորագույն կամպանիաների վերաբերմամբ.

զ) հաստատում է զանազան ֆոնդերի չափը և աշխուրի համար տրվելիք միջերքի ու դրամի քանակը.

ե) հաստատում է արտելի ներքին կարգի կանոնները:

Կանոնադրության այս կետում թվարկված բոլոր հարցերի վերաբերմամբ արտելի վարչության ընդունած վորոշումներն անվավեր են առանց ընդհանուր ժողովի հաստատման:

Ընդհանուր ժողովն արտելի անդամների ընդհանուր թվի առնվազն կեսը ներկա լինելու դեպքում որին նական է՝ բոլոր հարցերը լուծելու համար, բացի արտելի վարչության ու նախագահի ընտրության հարցից, արտելի կազմից վտարելու հարցից և զանազան ֆոնդերի չափին վերաբերող հարցից, վորոնք վորոշելու համար անհրաժեշտ է, վոր ընդհանուր ժողովում ներկա լինի անդամների ընդհանուր թվի առնվազն յերկու յերրորդ մասը:

Ընդհանուր ժողովը վորոշումներ է ընդունում ձայների մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ:

21. Արտելի գործերը վարելու համար արտելի անդամների ընդհանուր ժողովը յերկու տարի ժամանակով ընտրում է վարչություն 5—9 հոգի կազմով, նախած արտելի մեծությանը:

Արտելի վարչությունն արտելի գործադիր որգանն

է և արտելի անդամների ընդհանուր ժողովի առաջ պատասխանատու յե արտելի աշխատանքի համար և պետության հանդեպ արտելի պարտավորությունների կատարման համար:

22. Արտելի և նրա բրիգադների աշխատանքի մենորյա ղեկավարության, ինչպես և վարչության վորոշումների կատարման ամենորյա ստուգման համար արտելի ընդհանուր ժողովն ընտրում է արտելի նախագահ, վորը միևնույն ժամանակ հանդիսանում է վարչության նախագահը:

Նախագահը պարտավոր է վարչության նիստ գումարել ամսական առնվազն յերկու անգամ՝ ընթացիկ գործերը քննարկելու և համապատասխան վորոշումներ ընդունելու համար:

Վարչությունը նախագահին ոգնելու համար վարչության անդամներից ընտրում է նախագահի տեղակալ, նախագահի առաջադրությամբ:

Նախագահի տեղակալն իր ամբողջ աշխատանքի մեջ յենթարկվում է նախագահի ցուցումներին:

23. Անասնապահական ֆերմաների բրիգադիւրներին ու վարիչներին նշանակում է արտելի վարչությունը՝ առնվազն յերկու տարի ժամանակով:

24. Հաշվապահությունը վարելու և գույքի հաշվառումը կատարելու համար, վարչությունն արտելի անդամներից ընտրում կամ վարձով հրավիրում է հաշվապահ: Հաշվապահը վարում է հաշվապահությունը և հաշվարկումը սահմանված ձևերով և ամբողջովին յենթարկվում է արտելի վարչությանն ու նրա նախագահին:

Հաշվապահին վոչ մի իրավունք չի տրվում ինքնակամ տնորինել արտելի միջոցները, ամաններ տալ և ծախսել բնամթերքի ֆոնդերը: Այդ իրավունքները վերապահվում են միմիայն արտելի վարչությանը և նախագահին: Արտելի ծախսի դրամական փաստաթղթերն ստորագրում են, բացի հաշվապահից, նաև արտելի նախագահը կամ նրա տեղակալը:

25. Վերստուգիչ հանձնաժողովն ստուգում է վար-

չության տնտեսական-ֆինանսական ամբողջ գործու-
նեյությունը, ստուգում ե՝ թե դրամի ու բնամթերքի
մուտքերն արդյոք սահմանված կարգով մուտք արված
են արտելում, արդյոք պահպանվե՞լ է միջոցները ծախ-
սելու՝ կանոնադրությամբ նախատեսված կարգը, բա-
վարար հոգատարությամբ պահպանվո՞ւմ է արդյոք
արտելի գույքը, չկա՞ն արդյոք արտելի գույքի և դրա-
մական միջոցների հափշտակումներ ու վատնումներ,
ի՞նչպես է կատարում արդյոք արտելն իր պարտակա-
նությունները պետության հանդեպ, ինչպե՞ս է վճա-
րում իր պարտքերը և ի՞նչպես է գանձում իր ստանա-
լիքներն արտելի պարտապաններին:

Դրա հետ միասին վերստուգիչ հանձնաժողովը
մանրագնին ստուգում է արտելի բոլոր հաշիվներն իր
անդամների հետ, յերևան է բերում թերահաշվի, աշխ-
որերի վոչ ճիշտ գրանցման, աշխորերի հաշիվները
ժամանակին չտեսնելու ամեն մի դեպք և արտելի ու
նրա անդամների շահերի խախտման այլ դեպքերը:

Վերստուգիչ հանձնաժողովը վերստուգում է կա-
տարում տարեկան չորս անգամ: Վերստուգիչ հանձնա-
ժողովը վարչության կողմից ընդհանուր ժողովին ներ-
կայացվող տարեկան հաշվետվության առթիվ տալիս
է իր յեզրակացությունը, վորն ընդհանուր ժողովը լը-
սում է վարչության հաշվետվությունից անմիջապես
հետո: Վերստուգման արձանագրությունը հաստատ-
վում է ընդհանուր ժողովի կողմից:

Վերստուգիչ հանձնաժողովն իր գործունեյության
համար հաշվետու յե արտելի անդամների ընդհանուր
ժողովի առաջ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
I. Անել եւ նոր կոլտնտեսային գյուղի ղեկավարներ ու ղեկավարուհիներ	5
II. Կոլտնտեսությունների գրադեցրած հողի շինարարության մասին	10
III. Արտելում կոլտնտեսականների անձնական շահերի հա- մակցումը նրանց հասարակական շահերի հետ	16
1. Տնամերձ հողամասի չափի մասին	19
2. Կոլտնտեսականների տնտեսությունների անձնական անասնապահության չափը	22
3. Ձին կոլտնտեսականի անձնական կաթիքների համար ոգտագործելու մասին	28
4. Արտելի անբաժանելի ֆոնդերի մասին	30
IV. Արտելի անդամության մասին	35
1. Անդիտակիցներին դարձնել ղեկավարից	35
2. Կոլտնտեսությունից վտարելու մասին	37
3. Ինչպես վարվել մենատնտեսների հետ	42
4. Մշտական բրիգադների մասին	44
V. Կառավարման հարցեր	47
1. Արտելի արտադրական խնդիրները	47
2. Արտելի կուլտուրական խնդիրները	49
3. Ընդհանուր ժողովի մասին	51
4. Արտելի նախագահի ու վարչության մասին	54

ՀԱՎԵԼՎԱԾ

Գյուղատնտեսական արտելի Որինակելի կանոնա- դրություն	61
---	----

Խմբագրություն՝ Վ. Վարդապետյան, Գ. Գրիգորյան
Թարգմ. և Այվաղյան. Օրբագրիչ՝ Ա. Հախվերդյան


Գլավլիտի լիազոր Գ—ճ2

Հրատ. 184. Գառվեր 346. Տիրաժ 10000.

Հանձնված և արտադրության 1935 թ. մարտի 22-ին

Ստորագրված և տպագրելու 1935 թ. ապրիլի 3-ին

Պետհրատի Տպարան — Յերեվան



193

ԳԻՆԸ 70 ԿՈՊ.

Я. А. Яковлев

Итоги второго всесоюзного съезда
колхозников - ударников

Доклад заведующего Сельхозотделом ЦК ВКП(б)
на Московском и Ленинградском партийных
активах

Сельхозгиз 1935 Эривань

ՀՀ Ազգային գրադարան



NL0217029

30.720